
ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԲԱՆՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ԲԵԼԿԻՆԱ, ԶԵԼԵՆՑՈՎ, ԱԳԱՊՈՎ,
ԳԵՐԱՍԻՍՈՎ, ՍՐԲՈԼԵՎԱ, ԼԵՎԵՏԻՆԱ

ՍԵՂԱՆԻ ԳԱԶԱՐ

635
Ս-43

ԳՅՈՒՂՆՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1936

24 SEP 2010

ԿՈՆՏՆՏԵՍՏԱԿԱՆ ԶԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՔԱՆՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՑ — ԱՅԳԵՊՏՂԱԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԳԱՐՁՈՒԹՅՈՒՆ


635

P-43 *այ.*

Ա. ԲԵԼԿԻՆԱ, ՋԵԼԵՆՑՈՎ, ԱԳԱՊՈՎ, ԳԵՐԱՍԻՍՈՎ,
ՍՈՐՈԼՅԵՎՍ, ԼԵՎԵՏԻՆԱ

Ս Ե Ղ Ա Ն Ի Գ Ա Զ Ա Ր





1131
37

Գ Ա Ջ Ա Ր

ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական սննդի գործում գազարը խոշոր նշանակու-
թյուն ունի վորպես ամենակարևոր բանջարեղեններից մեկը:
Իր սննդատվությամբ նա գերադասնում է մյուս արմատապտուղ-
ներից և համեմատած սեղանի ճակնդեղի, շաղգամի, գոնգեղի և
այլ արմատապտուղների հետ, ավելի շատ ախաջրատներ և պտ-
քունակում (կրախմալ, շաքար), վորոնք այնքան անհրաժեշտ են
մարդու որգանիզմի համար: Այսպես, որինակ, տարբեր արմատա-
պտուղների չոր նյութի մեջ շաքարը և կրախմալը կազմում են
հետևյալ տոկոսը՝ գաղար 8,2%, ճակնդեղ 5,2%, գոնգեղ 4,5%,
շաղգամ 2,5%: համեմատած մսի, ձկանի, ձվի և այլ սննդանյու-
թերի հետ, գազարն աչքի յե ընկնում իր չափազանց լավ ազդե-
ցությամբ մարսողության և արյան ճիշտ շրջանառության վրա:
Փաղարը պարունակում է մեծ քանակությամբ վիտամիններ, վո-
րոնք մեծ նշանակություն ունեն մարդու առողջության հա-
մար և ընդունակ են կանխել մի շարք հիվանդություններ, ինչ-
պիսին են՝ լնդախտը, վոսկրախտը, ուսմատիզմը և այլն:


Թարմ գազարի և գազարահյութի մեջ պարունակվող վիտա-
մինները հրաշալի ազդեցություն են գործում յերիխանների զար-
գացման վրա, մանավանդ թույլ և բախտիկ յերիխանների վրա:

Բացի այն, վոր գազարը գործածվում է իբրև ողտակաբ
սննդամթերք՝ թարմ և յեփված վ ճակում տարբեր կերակուրների
և սոուսների մեջ, վերջին ժամանակները նա լայն չափով ոգտա-
գործվում է նաև պահածոների արդյունաբերության մեջ, պտ-
փիղո պատրաստելու համար և վորպես ֆարշ՝ բանջարեղենների
պահածոների մեջ:

Այս հատկությունների շնորհիվ, ժողովրդական տնտեսու-
թյան մեջ գազարն ստացել է խոշոր նշանակություն: Հազվա-
դյուր կարելի յե գտնել այնպիսի տնտեսություններ, վորտեղ
գազար չի մշակվում:

Գազարի ցանքի տարածությունը Խորհրդային Միության մեջ 1933 թվին կազմում էր 200 հազար հեկտար, կամ բանջարեգեղենների ընդհանուր տարածության 9%-ը: Հայաստանում գազարի մշակությունը բռնում է մոտ 800 հեկտար տարածություն: Ներկայումս մշակվող գազարն առաջացել է վայրի գազարից, վորի հայրենիքը հանդիսանում է հարավ-արևելյան Ասիան: Գազարի վայրի տեսակները մեր Միության մեջ կարելի չէ հանգիպել մի շարք շրջաններում:

Մշակության մեջ գազարը հայտնի չէ հնարաբայան շրջաններից, սակայն այժմյան փոփոխականներն սկսել են տարածվել միայն



Նկ. 1. Գազարի ծաղկափթթուներ — հոլբանոց, ձախից — ծաղկափթի սկզբը, աջից — լերիվ ծաղկումն՝ առանձնացրած հոլբանոցներում

19-րդ դարի կեսից և ունեն ֆրանսիական, անգլիական և հոլանդական ծագում: Մինչ այդ փոփոխականների առաջնալը, մշակության մեջ տարածված էր գազարի գեղին, յերկար տեսակը, վորը մասամբ մինչև այժմ էլ մշակվում է մեզ մոտ՝ միջին Ասիայի շրջաններում և Կովկասում:

Գազարը պատկանում է հովանոցազգիների ընտանիքին: Գազարի սերմը ցանելուց մինչև նոր սերմ ստանալն անցնում է յերկու տարի: Ցանելու առաջին տարին գազարն առաջացնում է հաստ, մսալի արմատ՝ վերերկրյա փարթած տերևափթթույնով: Գազարն ունի կտրատված տերևներ, վորոնց մի մասը նշտաբանման, սրված ձևի յին:

Հետևյալ գարնանը տնկած արմատն առաջացնում է սեր-

մացու ճյուղավորումներ, վորոնք կազմում են բարդ ծաղկափթթույն, վորը կոչվում է հովանոց: Այս հովանոցն իր հերթին բաժանվում է առանձին մանր հովանոցների, վորոնց վրա առաջնում են սերմերը: Գազարն ունի մանր ծաղիկներ՝ հինգ սպիտակ պսակաճերթիկներով: Ծաղիկները մեծ մասամբ յերկսեռ են, բայց պատահում են նաև զուտ արական և զուտ իգական ծաղիկներ: Յերբեմն էլ պատահում են բոլորովին անսեռ ծաղիկներ:

Գազարը խաչածով փոսովող բույս է.— Փոշոտումը կատարվում է քամու կամ միջատների միջոցով: Ձանաղան անբարենպաստ պայմանների ազդեցության տակ գազարը յերբեմն սկսում է ծաղկել հենց ցանելու առաջին տարին: Այս շեղումը նորմալ դարգացումից բացատրվում է մի քանի պատճառներով. նախ, վոր գազարը հատկություն ունի վերադառնալ վայրի ձևերին, վորոնք ծաղիկները տալիս են հենց առաջին տարին, առանց արմատը զարգացնելու: Յեվ այնուհետև վաղաժամ ծաղկումը նկատվում է սովորաբար շոգ և չորային ամառն ղեպքում: Յերբեմն էլ ձմացանի (դոնդուրմա) ղեպքում գազարը տալիս է 40-ից 50% վորձ ավող բույսեր: Այս տեսակետից մեծ դեր է խաղում նաև սերմերի վերակը, ըստ վորում վոչ տեսակավոր սերմերը մեծ քանակությամբ այսպես կոչված «վորձ բույսեր» են տալիս. տեսակավոր սերմերն այդ պակասությունը մեծ մասամբ չունեն:

Գազարի արմատը բաղկացած է հետևյալ յերեք մասից՝ ղլից, պարանոցից և բուն արմատից:

Ղլիք վրա գտնվում է արմատակից՝ տերևների տերևաբույլը:



Պարանոցը կազմում է արմատի տերևներից և մազարմատներից ազատ մասը, իսկ բուն արմատն սկսվում է արմատի մասից, մազարմատների առաջացման անցից և խոր թափանցում է հողի մեջ:

Արմատապտղի մակերեսի վրա գտնվում են միահավասար կերպով դասավորված մանր փոսիկներ, կամ փոքրիկ բշտիկներ, վորոնք կոչվում են աչքեր կամ վոսպնյակներ:

Գազարի ներսի մասերն իրենց զարգացման համար անհրաժեշտ ողն ստանում են այդ վոսպնյակների միջոցով: Վորքան զժվար է ողի թափանցման պայմանները գազարի անման հողաչերտերի մեջ, այնքան ավելի շատ են զարգանում նրա վրայի սողնյակները, և կողտացնում նրա մասնյուղի կառուցվածքը:

Գազարի ուղիղ ձևի և կանոնավոր արմատների հետ մեկ-
անոց, նկատվում են հաճախ նաև խիստ ծաված և ճյուղավորված
արմատներ: Արմատների այդ այլանդակուլթյան պատճառը կա-
րող են լինել ֆեասատուները, վոչ կանոնավոր նախապատրաստ-
ված հողը և անորակ խնամքը: Այս յերևույթներն զգալի չափով
զակասում են, յեթե հողի մշակումը բարելավվում է:

Յեթե գազարը կտրենք ըստ յերկարության և լայնու-
թյան, հասարակ աչ-
քով մենք կտեսնենք



նրա կառուցվածքը:

Նյութի ուղիղ կամ

զեղնանարնջագույն
շերտը կոչվում է մի-
ջուկ, կամ, ավելի ճիշտ
փայտանյութ: Իսկ
արտաքին շերտը կոչ-
վում է արմատի կե-
ղև: Կեղևի ներքևի մա-
սից սկիզբ են առնում
կողքի փոքրիկ արմա-
տիկները, վորոնց ոգ-
նությամբ արմատա-
պտուղը սնվում է հո-
ղից:

Նկ. 2. Գազարի արմատի կտրվածքն ըստ յերկա-
րության և լայնության: Կտրվածք ըստ յերկա-
րության — A: H — բնափայտ, P — կեղև, W կողքի
արմատ: B — կտրվածք ըստ լայնության

Մանդանյութերի կարևոր մասը (շաքար, կրախմբ) կուտակ-
վում է գլխավորապես արմատապտղի կեղևի մեջ, և այդ պատ-
ճառով կեղևային մասն ավելի համեղ և սննդատու յե, քան մի-
ջուկը:

Կան այնպիսի սորտեր, վորոնց կեղևը և միջուկն ունեն
միատեսակ գունավորում: Այդպիսի փոփոխակները կոչվում են
տուանց միջուկի՝ «անմիջուկ»: Սրանց թվին է պատկանում, որի-
նակ՝ «նանտսկի» գազարը:

Նարնջակարմրագույն գազարների արմատի մասնյութի
գունավորումը կախված է հատուկ նյութից, վորը կոչվում է կա-
բոտին և կուտակվում է արմատի բջիջների մեջ՝ մանր բյուրե-
րեղիկների ձևով:

ԳԱԶԱՐԻ ՍՈՐՏԵՐԸ

Գազարն ունի մի քանի սորտեր, վորոնք իրարից տարբեր-
վում են բերքատվությամբ, համով, վաղահասությամբ, արմատի
ձևով և մի շարք ուրիշ հատկանիշներով:

Ցանելու ժամանակ անհրաժեշտ է հազվի առնել զանազան
սորտերի առանձնահատկությունները, վորի համար անհրաժեշտ
է լավ ծանոթ լինել նրանց:


Սորտի առանձնահատկու-
թյունները գիտենալն
առանձնապես կարևոր է
սերմնարուծական աշխա-
տանք տանելու դեպքում,
այս պատճառով մենք տա-
լիս ենք գազարի ամենա-
առատված սորտերի նկա-
րագրությունը:

Գազար «նաեցսկի» — նաե-
դլանո.— Մա վաղահաս սորտ
է, վորի տեսնիկական լրիվ
հասունացումը տեղի յե
ունենում մոտավորապես
115—118 օրում:

Արմատապտուղը կիսա-
յերկար է, ուղիղ, զլանաձև
բութ ծայրով, մակերեսը
հարթ է, ունի վոչ խոր,
մանր ու նեղ վոսպնյակներ:

Արմատապտուղը կարմ-
րու-նարնջագույն է, փոքր,
կարմիր գույնի միջուկով:

Արմատի միջին քաշը
100—120 գրամ է: Տերևնե-
րը մանր են, տերևաբույլը
թույլ թիավորված 30 սան-



Նկ. 3. Կիսայերկարավուն գազար
նանտսկայա 1/8

տիմետը բարձրությամբ: Համի տեսակետից «նանտսկի» գազարն
ամենալավ սորտն է համարվում և առանձնապես գնահատվում է
իր բարձր աստիճանի նրբությամբ և հյութալիության համար:

Մա ամենատարածված սորտերից մեկն է: Հաջող բերք է տալիս փուխը, թափանցիկ հողերում, խկ ծանր հողերում ստացվում են մեծ քանակությամբ այլանդակ տրմատներ, վորի հետեանքով խիստ ընկնում է նրա ապրանքայնությունը: Ձմռանի, (դո՛դուրմայի) համար այս սորտը համարվում է ամենալավերից մեկը:

Այս սորտի պահասությունն այն է, վոր նա ձմռան պահալու համար դիմացկուն չի:


«Նանսնիլ» գաղարը կարելի յե ոգտագործել նաև ջերմոցոյին—ջերմատնային ցանքերի համար:

«Նանսնիլ» սորտը շատ տարածված է նաև մեզ մոտ, Հայաստանում համարյա բոլոր շրջաններում, մանավանդ Հենինականում և Կոտայքում, վորտեղ վերջին տարիները լայն ծավալ են ստացել գաղարի աշնանացանը և ձմռանը, վորի համար ոգտագործվում է բացառապես նանսնիլ սորտը:

Մա մեր լավագույն սեղանի գաղարն է, վորն ոգտագործվում է նաև պահածոների արդյունաբերության մեջ:

«Գերանդա» գաղարը միջին հասունություն ունեցող սորտերից է: Արմատապտուղը նարնջակարմրագույն է, հաստ, կարճ, կոնաձև, բուլթ ծայրով, դեղին լայն միջուկով և մանր վոսպնյակներով: Արմատապտուղի միջին քաշը 200 գրամ է: Տերևները միջին մեծությամբ են, փաված տերևաբույլով, 50 սմ բարձրությամբ: «Գերանդա»-ն բավականի տարածված սորտ է. նա հաջող բերք է տալիս վոչ միայն փուխը, այլև ծանր հողերում: Մեզ մոտ՝ Հայաստանում վերջին տարիները բավականաչափ տարածված սորտ է: Ձմեռվա պահելու համար լավ դիմացկուն է:

«Շանտեն» գաղարը պատկանում է կիսայերկար, միջին հասունության սորտերի շարքին: Տերևիկական լրիվ հասունության հասնում է ցանհուլց 120—125 որ հետո:



Նկ. 4. Գերանդա

Արմատները յերկարավուն-կոնաձև են, բուլթ ծայրով, արմատապտուղի մակերեսը հարթ է, վոսպնյակները՝ մանր, գույնը՝ նարնջակարմիր, միջուկը՝ դեղին:

Միջուկի մեծությունը կազմում է արմագծի 54%: Արմատապտուղի միջին քաշը 200 գրամ է:

«Շանտեն»-ն նույնպես տարածված սորտ է և հաջող բերք է տալիս թե փուխը և թե ծանր հողերում: Ձմեռվա պահելու համար լավ դիմացկուն է:


Վերջին տարիներս «Գերանդան» և «Շանտեն»-ն մեզ մոտ սկսել են տարածվել և հաջող բերք են տալիս մանավանդ մեր լեռնային և նախալեռնային գոտիներում:

«Վալերիա»-ն պատկանում է գաղարի յերկար, ուշահաս և բարձր բերքատվություն ունեցող սորտերի խմբին: Վեգետացիոն շրջանը 130—135 որ է: Արմատապտուղը յերկար է, սրածայր, հարթ մակերեսով, մանր և նեղ վոսպնյակներով:

Արմատապտուղը նարնջակարմրագույն է, խոշոր՝ դեղին կամ կարմիր միջուկով, վորը կազմում է արմատապտուղի արմագծի 64%: Տերևները խոշոր են, յերկաբ, մոխրականաչ գույնի, ուժեղ թփափորուժով: Արմատի միջին քաշը 300 գրամ է: Ձմեռվա պահելու ժամանակ տալիս է ամենաբարձր դիմացկունություն:

«Վալերիա» գաղարը հաջող փչակվում է խոր և փուխը հողերում: Մազը հողերում «Վալերիա»-ն պեճը է ցանել թմբերի վրա, այլպես կստացվեն մեծ քանակությամբ այլանդակ արմատներ: «Վալերիա»-ն մեր ուշահաս լավագույն փոփոխակներից մեկն է, վորը շատ տարածված է լեռնային գոտիներում և Հենինականի ատեղական գաղարի գերակազող մասն է կազմում:

«Վորոբյուսիլայա» գաղարը նույնպես պատկանում է յերկաբ ուշահաս փոփոխակներին:



Նկ. 5. Գաղարի տեսակները 1. «Փաբիդյան կարտուի», 2. «Գերանդա», 3. «Նանսայն», 4. «Նանտեն», 5. «Վալերիա», 6. «Վորոբյուսին»

Վեգետացիոն զրջանը տևում է մինչև 145 որ: Արմատները շատ յերկար են, կոնաձև, սրածայր, փոս ընկած հաստացած գըլթով: Վոսպնյակները խոշոր են, ուժեղ արտահայտված, վորոնք ուժեղ զարգանալով և իրար միանալով, յերբեմն ընդունում են գորտնուկանման տեսք:

Մսի գունավորումը նարնջա-կարմրագույն է: Միջուկը կազմում է տրամագծի 50% ը:

Այս սորտը միջուկի գույնի տեսակետից կայուն չէ և հաճախակի պատահում է, վոր միջուկը լինում է դեղին կամ վարդագույն:

«Վորոյնովսկոյա» սորտը շատ բերքատու յե: Արմատի միջին քաշը հասնում է 300—400 գր-ի: Թափանցիկ և խոր հողերում այս սորտը բարձր բերք է տալիս, իսկ սաղր վարած ծանր հողերում նա մեծ չափով այլանդակ արմատներ և տալիս, վորի հետևանքով նման հողերում ավելի նպատակահարմար է այս սորտը ցանել թմրերի վրա:

Ձմռան պահելու ժամանակ հայտաբերում է բարձր դիմացկունություն: Մեր պայմաններում տարածված է Լենինականի շրջանում:

Բացի այս ստանդարտ սորտերից, մեզ մոտ չայստանում տարածված են գաղարի այսպես կոչված տեղական սորտերը «Լենինականի տեղական» և կոտայքի «Արամուսի» գաղարները, վորոնք իրենցից ներկայացնում են սորտերի խառնուրդներ և նրանց խաչաձև փոշոտումից առաջացած հիբրիդներ:

ԳՍԶԱՐԻ ՊԱՀԱՆՁԸ ԿԼԻՄԱՅԻ, ՀՈՂԻ ԵՎԱՏՄԱՄԲ ՅԵՎ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում գաղարը տարածված է բոլոր շրջաններում՝ սկսած հարավից մինչև հյուսիսային ծայրամասերը:

Ջերմություն հանդեպ գաղարը պահանջկոտ չէ, հեշտությամբ դիմանում է ցածր Ջերմության, ըստ վորում սերմերն սկսում են ծլել արդեն 3—4 աստիճան Ջերմության տակ: Սակայն նրա սերմաբուսությունը հնարավոր է միայն ավելի տաք կլիմայական պայմաններում:

Սերմերի ծլման ժամանակաշրջանում գաղարը մեծ չափով խոնավություն է պահանջում: Ունենալով ամուր թաղանթ, սերմերն առանց բավարար խոնավության չեն ուռչում և չեն ծլում:

Այս պատճառով գաղարը պետք է ցանել հնարավորին չափ վաղ զարնանը, յերբ ջրի քանակությունը հողի մեջ բավարար է:

Սովորաբար գաղարի ծլերը դուրս են գալիս ցանելուց 15 որ հետո: Արմատապտղի ձևավորումն սկսվում է 4—5 տերև առաջանալուց հետո: Այդ ժամանակ գաղարի բույսին մեծ քանակությամբ ջուր է հարկավոր: Չոր յեղանակին արմատապտղի զարգացումը կանգ է առնում, նա կոշտանում է և փայտանում:

Չարգացյալ հետագա ժամանակաշրջանում ջրի պահանջն ավելի պակասում է, շնորհիվ լավ զարգացող և խորը թափանցող արմատային սխտեմի: Այդ ժամանակամիջոցում գաղարն ընդունակ է դիմանալ անգամ համեմատաբար յերկար չորություն:

Բայց և այնպես, ջրի պակասությունը չորային շրջաններում բացասաբար է ազդում գաղարի բերքատվության վրա, վորի հետևանքով գաղարի հաջող մշակումն այդպիսի շրջաններում հնարավոր է միայն արհեստական վուսեղան պայմաններում:

Գաղարի անցողությունն ամենից լավ գնում է բարեխառն կլիմա և բավարար խոնավություն ունեցող շրջաններում: Գաղարը դիմանում է ժամանակավոր գերհագեցմանը, կամ անդամ կարճատև լճացմանը, սակայն ջրի լճացումն առհասարակ բացասաբար է ազդում, բույսի վրա առաջանում են սնկային հիվանդություններ, գորշ կետեր, և գաղարի արմատներն սկսում են փտել: Արմատների փտումը նկատվում է նաև այն դեպքում, յերբ ցանքը կատարվում է ստորերկրյա բարձր ջրեր ունեցող հողամասերում: Թեպետ գաղարը մշակվում է ամեն տեսակի հողերում, սակայն արմատապտղի կանոնավոր զարգացումը տեղի յե ունենում միայն խոր և փոխոր հողերում: Այդ պատճառով գաղարի համար ամենալավ հողերն են որպեսական նյութերով հարուստ ավազակափային և կավա ավազային հողերը, ինչպես և սևահողերը: Կավային ծանր հողերում գարնանն առաջանում է կեղև, վորը խանգարում է ծլերին դուրս գալու:

Բացի այդ, այդպիսի հողերում արմատապտուղներն ստացվում են անկանոն ձևի և ճյուղավորվում են: Այս պատճառով կավային հողերը կարելի յե ոգտագործել գաղարի համար միայն այն դեպքում, յերբ նրանց Ֆիդիկական հատկությունները (ստրուկտուրան, ջրաթափանցկությունը և այլն) բարելավված վիճակն որգանական պարարտանյութերի և կրացման միջոցով:

Գաղարի մշակություն համար լավ են համարվում սննդանյութերով հարուստ սելավահողերը և չորացրած ճահիճները:

Գաղարի համար միանգամայն անպետք են համարվում քարքարոս հողերը, ինչպես և առաջին տարին վարած խամ հողերը:

Գաղարի ցանքին հատկացված հողամասը պետք է լինի հարթ կամ ունենա փոքր թեքություն: Սուր թեքությունները, ինչպես և փոս ցածրադիր հողերն աննպատակահարմար են գաղարի ցանքի համար, վորովհետև նրանք իրենց մեջ ավելորդ ջուր են կուտակում և առաջացնում լճացում:

ԳՍՁԱՐԻ ՏԵՂԸ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ՆՐԱ ՆԱԽՈՐԻՆԵՐԸ

Վորովհետև գաղարն ավելի վատ է ոչտադործում գոմաղբը քան կաղամբը կամ վարունգը, այդ պատճառով բանջարաբուծության մեջ, ցանքաշրջանառության գոմաղբով պարարտացրած առաջին դաշտում ցանում են կաղամբ կամ վարունգ, իսկ գաղարը՝ պարարտացումից յերկրորդ կամ յերրորդ տարին: Գոմաղբն անմիջապես գաղարի տակ տալու դեպքում, արմատապտուղները կանոնավոր չեն դարդանում, մյուս կողմից նաև, ծալում և կորցնում են իրենց վորակը՝ սննդի և համի տեսակետից:

Հյուսիսային և միջին շրջանների աննշանյութերով աղքատ և զաղդուլացած հողերում գաղար մշակելիս կարելի չէ պարարտացնել փոսած գոմաղբով, վորն այդ դեպքում արվում է հողին այնանից:

Գաղարը պահանջում է մուլախոտերից միանգամայն մաքուր հողեր, վորի պատճառով նրա ամենալավ նախորդները համարվում են գոմաղբով պարարտացրած կաղամբը, տոմատը, ճակնդեղը և կարտոֆիլը:

Մեր լեռնային և նախալեռնային գոտիներում գաղարը անդավորում են ցանքաշրջանառության 3-րդ դաշտում, կարտոֆիլից հետո:

Յերեքուկի և այլ բազմամյա խոտերից հետո գաղար մշակել չի կարելի, վորովհետև նման հողերում նա խիստ մնասվում է գանազան մնասատուների կողմից, նմանապես չի հանձնարարվում գաղարը մշակել տակուիկավոր մուլախոտերով (չայիր, զանդուրդան և այլն) վարակված հողերում:

ԳԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Յերեքուկի նրանից, վոր գաղարը ցանվում է պարարտացումից հետո յերկրորդ կամ յերրորդ տարին, անհրաժեշտ է ցանքաշրջանառության առաջին դաշտը (կաղամբ, վարունգ) պարարտացնել լրիվ նորմայով, տալով հեկտարին 50—60 տոնն գոմաղբ: Յեթե անտեսությունը գոմաղբի պակաս է զգում, այդ նորման կարելի չէ իջեցնել մինչև 30—40 տոնն հեկտարին, ավելացնելով հանքային լրիվ պարարտացում: Հարավային շրջանների համար որդանական պարարտացման այս նորման կարելի չէ իջեցնել հեկտարին մինչև 15—20 տոնն, լրացնելով հանքային պարարտանյութերով:

Կավային, ծանր, կապակցված հողերում պարարտանյութը մացնելու ամենալավ ժամանակը համարվում է աշունը: Գոմաղբը փոխադրվում է այնանից, հավասարապես փռվում է դաշտում և հողի տակն է տրվում ցրտահերկի ժամանակ: Ավազային հողերում, վորոնց մեջ քայքայման պրոցեսն ավելի ուժեղ է արագ և կասարվում, գոմաղբը տրվում է վարնանից և հերկվում է դաշտուրս գալու հենց առաջին հնարավորության դեպքում:

Մերձքաղաքային գոտում՝ գոմաղբի հետ մեկտեղ՝ պիտի գործադրվի նաև քաղաքի աղբը, վորն իր ազդեցությունը գոմաղբից յետ չի մնում: Գաղաքի աղբը կարելի չէ գործադրել թեթարմ, և թե փոսած վիճակում:

Թարմ աղբը պետք է տալ առաջին հերթին ավազա-կավային հողերին, մինչդեռ փոսածն ավելի լավ է տալ ծանր կավային և կավա-ավազային հողերին, ինչպես նաև սևահողերին:

Աղբը մտցվում է նույն ժամկետներին, ինչ վոր գոմաղբը: Աղբի նորման հեկտարին 50—60 տոնն է: Այն դեպքերում, յերբ անտեսությունն աղբով ապահովված է, նորման հեկտարին կարելի չէ բարձրացնել մինչև 60—100 տոնն:

Գաղարի տակ մտցվում են հետևյալ հանքային պարարտանյութերը:

Վորպես ազոտական պարարտանյութ՝ ծծմբաթթվային ամոնի, կիրազոտ, սելիտրա և այլն, վորպես ֆոսֆորական պարարտանյութ՝ սուպերֆոսֆատ, ֆոսֆորային ալյուր և վորպես կալիումական պարարտանյութ՝ սիլվիտ և կալիի 30—40% ալյին աղ:

Հանքային պարարտանյութերի գործադրումը պետք է համապատասխանի հողի տեսակին: Ավազոտ հողերը պահանջում են

հանքային լրիվ պարարտացում: Կալիով աղքատ տորֆային հողերի մեջ մտցվում է կալի: Մանգանյուլթերով աղքատ պաղպղակաճ հողերի մեջ մտցվում են հանքային պարարտանյութերի բոլոր յերեք տեսակները, սեահողի մեջ գլխավորապես մտցվում են ֆոսֆորական պարարտանյութեր: Հանքային պարարտանյութերի դործադրումը բարձրացնում է գազարի բերքատվությունը 10—20% -ով:

Հենիսահանի և Կոտայքի պայմաններում գազարին պետք է տալ հանքային պարարտանյութերի հիմնական յերեք տեսակը՝ ազոտ, ֆոսֆոր և կալի:

Գազարի համար հանքային պարարտանյութերի ամենալավ նորման համարվում է ազոտ՝ 45—60 կգ, ֆոսֆոր՝ 60—90 կգ և կալի՝ 60—90 կգ մեկ հեկտարին (մաքուր ազոտ, կալի և ֆոսֆոր): Մեր հողերի համար այդքան կալի մտցնելու կարիք չկա, բավական է 30—40 կգ մաքուր կալի:

Հանքային պարարտանյութերը նորվում են հողին տարբեր աստիճանի հարաբերություն ունեցող աղերի ձևով, այդ պատճառով տրվելիք պարարտանյութերի քանակը վորոշելու համար անհրաժեշտ է վերոհիշյալ նորմաները բազմապատկել 100-ով և բաժանել տվյալ նյութի մեջ պարունակվող սննդանյութի տոկոսի վրա: Որինակ, սիլվիտի տարունակում է 14% կալի, ուրեմն մեկ հեկտարին 90 կգ մաքուր կալի տալու դեպքում հարկավոր է $\frac{90 \times 100}{14} = 640$ կ սիլվիտի:

Նույն ձևով հաշվում ենք 20% -անի մաքուր ազոտ պարունակող ծծմբաթթվային ամոնիումի և 14—15% մաքուր ֆոսֆորաթթու պարունակող սուպերֆոսֆատի մեկ հեկտարին տրվելիք քանակը: Հանքային պարարտանյութերի միջին նորման կազմում է մեկ հեկտարին— ծծմբաթթվային ամոնի՝ 2,3 ցենտներ, սուպերֆոսֆատ՝ 6 ցենտներ և սիլվիտի՝ 6 ցենտներ:

Սուպերֆոսֆատը և ծծմբաթթվային ամոնիումը տրվում են հողին վաղ գարնանը՝ հերկի ժամանակ, գազարի ցանքից առաջ: Սիլվիտի տրվում է մտցնել ձմռանը կամ, ծայրահեղ դեպքում՝ հնարավորին չափ վաղ գարնանը, հողի մշակումից առաջ: Այն դեպքում, յերբ հանքային պարարտանյութի յերեք տեսակն էլ մտցվում են գարնանը, պարարտանյութը շաղ տալու, հողի տակն անելու աշխատանքները կրճատելու տեսակի-

ախց, նպատակահարմար է այդ նյութերը լավ խառնել իրար և աղա շաղ տալ:

Սուպերֆոսֆատը, սիլվիտը և ծծմբաթթվային ամոնի են պետք է իրար հետ խառնել հողի մեջ մտցնելուց առաջ:

Հանքային պարարտանյութերը պետք է մտցնել հողի մեջ պարարտանյութեր շաղ տվող հատուկ շարքացանով, կամ թե այդ նպատակի համար կարելի յե հարմարեցնել սովորական հացահատիկային շարքացաններ, վորոնց խոփերը հանվում են և տեղը կախվում մեխեր խփած տախտակներ, վորոնք նպաստում են պարարտանյութերի հավասար շաղ տալուն:

Գործածվում են նաև համակցված շարքացաններ, վորոնք հնարավորություն են տալիս սերմերը ցանելու հետ միաժամանակ շարքերի մեջ մտցնել նաև պարարտանյութերը: Վերջին դեպքում հանքային պարարտանյութերի նորմաները յերկու անգամ պակասում են: Վորպես որենք, հանքային պարարտանյութերը պետք է պահվեն ծածկված և չոր շինքի բովում:

Միջին բերքատվության ժամանակ գազարը վերցնում է հեկտարից 80—100 կգ կիր, այդ պատճառով հողի կրացման դեպքում բերքատվությունն զգալի չափով բարձրանում է. բացի այդ, բարձրանում է նաև արմատապտուղների վորակը:

Ավելի նպատակահարմար է կիր մտցնել ցանքաշրջանաթյան առաջին դաշտում, այնպիսի կուլտուրաների տակ, ինչպիսիք են կաղամբը և վարունգը, վորովհետև կրի ազդեցությունը պահպանվում է մի քանի տարիների ընթացքում:

Առանձնապես լավ է կրի ազդեցությունը, յերբ նա մտցվում է դոմաղրի հետ միաժամանակ:

Մեզ մոտ կրացումը կատարվում է միայն թթու հողերում, իսկ մեծ մասամբ Հայաստանի հողերը կրով հարուստ են և կրացման կարիք չի զգացվում:

Տեղական պարարտանյութերից գազարի տակ պետք է ոգտագործել մոխիրը:

Մոխիրն իր մեջ պարունակելով կալիի թանգարժեք սննդանյութեր, գազարի համար լավ պարարտանյութ է հանդիսանում: Շնորհիվ հիմքային հատկությունների, մոխիրն ամենալավ արդյունքն է տալիս թթու հողերում: Գազարի տակ մոխիրը մտցվում է ցանքից մի քանի որ առաջ, հեկտարին 7—9 ցենտների հաշվով: Վորդեպի մոխիրը ցրվելու ժամանակ փոշի չառաջացնի,

պետք է այն խառնել թաց հողի հետ: Յրգելուց հետո մտերմը հողի տակն է արվում փոցխերով կամ ցաքաններով:

Ի նկատի ունենալով, վոր մոխրի մեջ պարունակվող կալիին հեղուցթյամբ լուծվում է ջրում, մոխրը պետք է պահել ջրից և ձյունից պաշտպանված, չոր տեղերում:

Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիների պարժաններում մոխրի գործածությունը, վորպես պարարտանյութ շատ առաժված է:

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Գազարը պահանջում է խորը մշակված փուխը հողեր: Միայն այս պայմաններում են նրա արմատները լավ զարգանում և կանաչավոր ձևավորվում ու տալիս են ապրանքային բարձր յեղանակ:

Գոմադրի հողամասի մշակումն սկսվում է աշնանից, աշնանահերկ, կամ ցրտահերկ կատարելով: Աշնան հերկն ունի մի շարք առավելություններ. 1) ոժանդակում է խոնավության և սննդանյութերի կուտակմանը հողի մեջ, 2) լավացնում է հողի ստրուկտուրան, 3) ֆլասատուներ, հիվանդությունների և մոլախոտների պեմ պայքարելու գործում հանդիսանում է հիմնական ազդեցությունիկական ձեռնարկումներից մեկը:

Այս պատճառով գազարի համար բոլոր հողերը պետք է վաթել աշնանից: Բացառություն կազմում են միայն ուժեղ վտակավոր սելավահողերը, վորոնց դեպքում՝ վարելաչրտի վողողումից խուսափելու նպատակով՝ պետք է կատարել գարնան հերկ: Նույնը պետք է ասել նաև լեռնային շրջանների խոնավ սառը հողերի համար:

Յեղնելով վարելաչրտի հզորությունից, աշնան հերկը կատարվում է տարբեր խորություններ՝ հյուսիսային և միջին շրջաններում 15—18 սանտիմետր, Ուկրաինայի, Հյուսիսային Կովկասի և մեր պայմաններում՝ 20—23 սանտիմետր խորությամբ:

Աշնանավարը կատարվում է նախորդ կուլտուրայի բերքահավաքից անմիջապես հետո՝ սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիսներում. վորքան շուտ, այնքան լավ:

Մոլախոտերով ուժեղ վարակված, ինչպես և վազահատ կուլտուրաներից աղաաված հողամասերում (վազահատ կաղամբ, վարունգ, տոմատ), վարից առաջ նախորդ պետք է խողանավար գալթաններով կատարել խոզանահերկ:

Հին բանջարանոցային, թեթև և լավ մշակված հողերում աշնան հերկը կատարվում է կուլտուրական թև ունեցող գութանով:

Անտառատեղերում և չորացրած ճահիճների հողերում հերկը կատարվում է հատուկ գութաններով:


Անհրաժեշտ է հետևել, վորպեսզի աշնանավարը կատարվի խնամքով, առանց խամ տեղեր թողնելու, պահպանելով ընդունված խորությունը և ապահովելով վարելաչրտի լրիվ շրջումը: Այդ դեպքում գալթիորեն հեշտանում են գարնան նախացանքային մշակման աշխատանքները և նպաստավոր պայմաններ են ստեղծվում բույսի զարգացման համար: Գազարի նախացանքային մշակումը պետք է սկսել այն հաշվով, վոր հողի մշակման և ցանքի միջև յերկար ընդմիջումներ չլինեն: Ստանվությունը հողում պահպանելու նպատակով, վաղ գարնան դաշտ դուրս գալու հենց առաջին հնարավորություն ժամանակ, աշնանահերկը 1—2 յերես արեք և փոցխել դիզզագ փոցխով: Բազմամյա տակալիտավոր մոլախոտերով չվարակված ծանր կավային հողերում այդ աշխատանքը կարելի չէ կատարել ափսեյավոր փոցխերով: Հետագայ մշակումը կատարվում է յեղնելով հողի հատկություններից:

1131
37

Բանջարաբուծական գիտահետազոտական ինստիտուտի փորձերով պարզված է, վոր հին, մշակված, թեթև, մոլախոտերից ազատ, ավաղա-կավային հողերում գարնան կրկնավարը կարելի չէ փոխարինել փխրեցումով կամ կուլտիվացիայով՝ 8—10 սանտիմետր խորությամբ: Հողի կուլտիվացիան ավելի արագ է կատարվում, քան կրկնավարը, վորի հետևանքով գազարի ցանքը կարելի չէ կատարել ավելի վաղ և խտացրած ժամկետներում:

Գարնան կրկնավարի փոխարինումը փխրեցումով բարձրացնում է բերքատվությունը: Այդ յերևում է Բանջարաբուծական գիտահետազոտական ինստիտուտի 1932—33 թվի փորձերի ավյալներից: Ինչը փորձի ավյալներից գազարի միջին բերքատվությունը (ավաղա-կավային, սելավային և թեթև կավա-ավաղային հողերում) վոց-սեպտեմբերի գոտու պայմաններում յեղել է հետևյալը.

Մշակման ձևը	Բերքը տոններով 1 հեկտարից
Աշնանավար + գարնան փխրեցում գազանակավոր կուլտիվատորով	22,6
Աշնանավար + կրկնավար գութանով	19,2



Այս դեպքում կրկնավարի փոխարին գարնանը կատարվում է փխրեցում կուլտիվատորներով կամ եքստիրպատորներով 8—10 սանտիմետր խորությամբ, վորից հետո անմիջապես հողը փոցխվում է 1—2 յերես:

Կավային, ծանր, կապակցված, մուխտոտերով վարակված հողերն անհրաժեշտ է գարնանը կրկին հերկել 15—18 սանտիմետր խորությամբ և փոցխել:

Կրկնավարը կատարվում է հողի հասունության կամ, ինչպես ասում են, «քեղ» վիճակում:

Սևահողերում, վորոնք աշնանից չեն հերկված, վաղ գարնանը, հենց առաջին հնարավորության դեպքում, պետք է կատարել գարնանավար, վարելաչերտի ամբողջ խորությամբ 18—20 սանտիմետր և ապա անմիջապես փոցխել 1—2 յերես:

Յ Ա Ն Ք

Ցանքից առաջ անհրաժեշտ է համոզված լինել, վոր սերմերը լավորակ են, դրա համար ել պետք է բուռն շնորհակալությունը:

Այդ նպատակով վերցնում ենք սերմերի ընդհանուր քանակից 15—20 գրամ, վորից, առանց ընտրության, զատում ենք յերկու նմուշ՝ յուրաքանչյուրը 100 սերմից: Չատված սերմերի ամեն մի նմուշը դասավորում ենք մաքուր, թաց կտորների վրա և դնում ափսոսների մեջ: Այնուհետև սերմերը ծածկում ենք ավելի հաստ կտորով և դնում տաք տեղ: Ամեն որ պետք է ստուգել, վոր կտորները խոնավ լինեն: Սերմերի ծլուճը տևում է 14 օր, ծլած սերմերի հաշվառումը կատարում են 6-րդ և 14-րդ օրը: Այդ ժամանակամիջոցում լավ սերմերը պետք է տան ամեն մի նմուշում 86—90 ծլից վոչ պակաս: Սերմերի ծլունակության տոկոսը վորոշելու համար հաշվում են՝ քանի ծիլ է ավել ամեն մի նմուշը. ստացված յերկու թիվը գումարում են և գումարը բաժանում յերկուսի: Որինակ՝ յեթե մի նմուշում ստացվել է 88, իսկ մյուսում՝ 85 ծիլ, նրանց ծլունակութունը հավասար է [(88+85):2] 86,5%-ի: Սերմերի ստուգումը պետք է կատարել վաղորոք, վորպեսզի հնարավոր լինի ժամանակին փոխարինել վատ սերմերը լավերով և ցանքը կատարել միանգամայն վատուհելի ու լավորակ սերմերով:

ՅԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ունենալով կարծր թաղանթ, գազարի սերմերը ծլման համար պահանջում են հողի առատ խոնավություն: Այդ պատճառով գազարը ցանվում է վորքան կարելի յե վաղ գարնանը, հենց վոր հնարավոր է լինում դաշտային աշխատանքներ սկսելը և հողն այնքան է ցամաքել, վոր չի կպչում: Շնորհիվ այն հանգամանքի, վոր գազարը բավականին ցրտադիմացկուն է, վաղ գարնան ցրտահարություններից վախենալու կարիք չկա: Միաժամանակ և միահավասար ծիլեր ստանալու համար, անհրաժեշտ է լրիվ ոգտագործել հողում կուտակված աշնան և գարնան խոնավության պաշարը:

Այս խնդիրն առանձնապես կարևոր նշանակութուն ունի մեր դազարացան շրջանների համար, վորտեղ գազարի մշակությունը տարվում ջրովի պայմաններում:

Մեղ մոտ յեթե գազարն ուշ է ցանվում և չեն ոգտագործվում հողում աշնանից կուտակված խոնավությունն ու գարնան անձրևները, այդ դեպքում գազարը յերկար ժամանակ մնում է հողում առանց ծլելու: Այսպիսով ստիպված ենք լինում ջրելու, վորի հետևանքով հողն ուժեղ կեղևակալում է և սերմերը զժվարությամբ են ծլում կամ մեծ մասը բլրորովին չի ծլում:

Գազարի ցանքի ժամկետները կախված են գարնան վաղ կամ ուշ բացվելուց և տարբեր են Միության զանազան շրջանների համար:

Հյուսիսային շրջաններում գազարի ցանքը պետք է կատարվի մայիսի 1-ից մինչև 10-ը, միջին շրջաններում՝ ապրիլի 20-ից մինչև մայիսի մեկը և հարավում՝ ապրիլի մեկից մինչև 15-ը, նայած շրջանին: Հայաստանի պայմաններում գազարի ցանքը կատարվում է հետևյալ ժամկետում — դաշտավայրում՝ 20/IV-ից — 15/IV, նախալեռային դոտում՝ 15/IV—1/V, լեռնային գոտում՝ 20/IV—10/V:

Վաղ ցանքը բարձրացնում է գազարի բերքը 20—30%-ով: Ավազա-կավային հողերում գազարի ցանքն ավելի վաղ է կատարվում, քան կավային հողերում:

Սերմաբուծական նպատակներով, վաղահաս փոփոխակների ցանքը կարելի յե 10—15 օրով ավելի ուշ կատարել, իսկ «Վալերիա», «Վորոբյովսկայա» և այլն ուշահաս սորտերը սերմաբուծական նպատակներով ցանվում են սովորական ժամկետներում:

Քաղաքի մշակութայինը պետք է տանել հարթ տարածու-
թյունների վրա, հարթ մարզերով կամ կորիներով: Յանքը կա-
տարվում է ձիու կամ արակտորի շարքացաններով: Յանքի ձևերն
են՝ մի գծանի շարքացան՝ 50 սանտիմետր միջարքային տա-
րածութամբ, կամ յերկգծանի ժապավեններով, գծերի մեջ 20—25
սանտիմ. հեռավորութամբ և ժապավենների մեջ՝ 50 սանտ. տա-
րածութամբ:

Յերկրորդ ձևի առավելությունն այն է, վոր բերքատվու-
թյունը, համեմատած մի գծանիի հետ, բարձրանում է 20%-ով,
միաժամանակ մշակման աշխատանքները կրճատվում են:

→ Մեզ մոտ գաղարացան հիմնական շրջաններում՝ Լենինա-
կանում, Արթիկում, Կոտայքում և այլն, գաղարը դժբախտաբար
մինչև որս ել ցանում են շաղացան, վորի հետևանքով և՛ մշա-
կությունն և թանգանում, և՛ բերքն ել պակաս է ստացվում, տա-
լով ապրանքային փոքր յիջանք: Հայաստանի պտղաբանչարա-
բուժական դոնալ կայանի Լենինականի հենակետի փորձերը ցույց
են տվել, վոր մեր պայմաններումն ել գաղարի յերկու և յերեք
գծանի ժապավենաձև ցանքերը, հնարավորութունն ստեղծելով
մեքենայացման յինթարկել մշակման աշխատանքները և կրճա-
տելով ձեռքի աշխատանքը, տնտեսական մեծ եֆեկտ են սախիւ,
ապահովելով բարձր բերքատվությունը և պահպանելով պրոդուկ-
տի վորակը: Այստեղից պարզ է, վոր մեզ մոտ նույնպես պետք
է անցնել գաղարի շարքացան ձևերին, ոգտագործելով յեղած հա-
ցահատիկային շարքացանները:

Քաղարի սերմերի ցանքի նորման ժապավենաձև ցանքի
գեպքում հեկտարին 5 կիլոգրամ է՝ սերմերի 90%-ից վոչ պա-
կաս ծյունակության դեպքում:

Այն դեպքում, յերը ծլունակությունն 90%-ից ցածր է,
սերմերի նորման պետք է համապատասխան չափով բարձրաց-
նել: Մեզ մոտ՝ Հայաստանում հեկտարին 10—12 կիլոգրամ սերմ
է ցանվում:

Ներկայումս գաղարի ցանքը կատարվում է ձակնդեղի Վերտա-
նի պոխար՝ շարքացանով, կամ սովորական հացահատիկային
Վերասնայա դվեդառ շարքացանով: Այդ դեպքում հացահատիկա-
յին շարքացաններից հանվում են ավելորդ խոփերը և կանոնա-
վորիչ տախտակի միջոցով դասավորվում 50 սանտիմետր հեռա-
վորության վրա:

Սերմերը շարքերում հավասար դասավորելու համար, նախ-
քան գաղարի ցանքն սկսելը, ցանքի նորմայի համաձայն ան-
հրաժեշտ է կարգավորել շարքացանը: Կարգավորման համար ան-
հրաժեշտ է իմանալ շարքացանի աշխատող մասի տարածության
լայնությունը և անվի շրջագծի յերկարությունը:

Շարքացանի բռնած լայնությունն ստանալու համար բազ-
մապատկում են խոփերի միջի տարածությունը նրանց քանակի
վրա: Ընթացքի անվի շրջագիծը չափում են առւելտկայով:

Բազմապատկելով անվի շրջագծի յերկարությունը շարքա-
ցանի բռնած լայնության վրա, ստանում ենք ցանքի տարա-
ծության չափն անվի մի պտույտի ժամանակ:

Մի հեկտար տարածության վրա շարքացանի անիվների
պտույտները վորոշելու համար բաժանում են 10.000-ը (հեկտա-
րի տարածությունը), բազմապատկումից ստացված թվի վրա:
Որինակ՝ Վերասնի պոխար՝ վեց շարքանի շարքացանն ունի վեց
խոփիկ՝ մեկը մյուսից 50 սանտիմետր հեռավորության վրա,
անվի շրջագիծը 3,8 մետր է, բազմապատկելով 3,8 մետր \times 6 և
0,5 մետրով՝ ստանում ենք 11,4 մետր. դա կլինի մի պտույտի
ժամանակ կատարած ցանքի տարածությունը:

Բաժանելով 10000-ը 11,4-ի վրա, ստանում ենք անիվների
պտույտների քանակը՝ 877 պտույտ մեկ հեկտարի վրա:

Վորպեսզի արագացնենք աշխատանքը և անիվը չըջենք
877 անգամ, վերցնում ենք այդ թվի մի վորևե մասը, որինակ՝
 $\frac{1}{50}$ մեր սրինակում դա կազմում է 17,5 պտույտ: Շարքացանի
անիվը, վորի մոտ դտնվում է փոխանցող մեխանիզմը, բարձ-
րացնում ենք, հենարան դնելով ստնու կամ շրջանակի տակ, վոր-
պեսզի անիվը կարողանա ազատ պտտվել:

Այնուհետև սերմերը լցնում են արկղի մեջ, սերմատար խո-
ղովակներին կապում են տուրակներ կամ տակն աման են դնում
(դուլը, ավսե) և հաշվելու հարմարության համար անվի վրա
նշան են կապում: Կանոնավորիչի սլաքը դնում են մի վորևե բա-
ժանմունքի վրա, վորը ցանվելիք սերմերի քանակին համապա-
տասխանող բացվածք է տալիս ցանող արկղի մեջ: Իրանից հետո
անիվն սկսում են միահավասար կերպով պտտել դաշտում աշխա-
տող շարքացանի պտույտների արագությամբ: Ինչպես ստացինք,

մեր որինակուած անիվը պետք է գործի 17,5 պտույտ Այնուհետև
տարակները կամ ամանների մեջ թափած սերմերն անհրաժեշտ
է առանձին-առանձին կշռել, հաշվի առնել, վորպեսզի հնարավոր
լինի վորոշել խոփիկների ցանքի միահավասարութունը: Յանած
սերմերի ընդհանուր քանակը պետք է հավասար լինի մեկ հեկ-
տարի ցանքի նորմայի քաշի $1/50$ -րդ մասին, այսինքն 5 կիլո-
գրամ ցանքի նորմայի դեպքում խոփիկներից պետք է թափվի
100 գրամ սերմ: Ամեն մի խոփիկը պետք է ցանի $(100 : 6) = 16,6$
գրամ կամ կլորացրած՝ 17 գրամ:

Յեթե կշռելու ժամանակ պարզվում է, վսր սերմերի քա-
նակը նորմայից բարձր կամ ցածր է, համապատասխանորեն ավե-
լացնում կամ պակասեցնում են ցանող անցքերի մեծութունը և
ստուգումը շարունակում մինչև պահանջվելիք նորման ստանալը:

Գազարի սերմերը սովորաբար ծլում են 14—18 օրվա ըն-
թացքում: Այդ ժամանակամիջոցում մոլախոտերն աբազ պարգա-
նում են և, համապատասխան պայքարի բացակայության դեպ-
քում, կարող են խեղդել գազարի ծիւրը, իսկ հողի փխրեցումն
այդ ժամանակ կատարելը դժվար է, վորովհետև ծիւրի շարքերը
դեռ չեն նշմարվում:

Այդ պատճառով գազարի մշակութան մեջ ընդունված է
գազարի սերմերը ցանել ուրիշ՝ արագ ծլող սերմերի հետ խառնած,
որինակ՝ ցանել սալաթի հետ: 5—6 օրից արգեն դուրս են գալիս
սալաթի ծիւրերը և նշմարվում ցանքի շարքերը, այդպիսով հնա-
րավորութուն են տալիս մինչև գազարի ծիւրի լրիվ յերկալը
կատարել միջաբքային տարածութունների առաջին փխրեցումը:

Սովորաբար սալաթը կազմում է գազարի սերմերի $1/20$ մա-
սը, այսինքն մի հեկտարին պահանջվում է 250—300 գրամ սա-
լաթի սերմ:

Գազարի ձմռանի դեպքում սալաթի սերմեր խառնելը
պարտադիր է: Յեթե ցանքը կատարվելու յե շարքացանով, հողը
պետք է ունենա լավ փոցխված հարթ մակերես, վորպեսզի ապա-
հովի սերմերի ցանքի միատեսակ խորութունը: Մանր-կազա-
յին հողերում սերմերը ծածկվում են 1—1,5 սանտիմետրից վոչ
խոր: Փուխը, թեթև ավազային հողերում սերմերն ավելի խոր են
ցանվում՝ յերկու սանտիմետրից վոչ պակաս:

Ցանքի ժամանակ պիտի խիստ պահպանել շարքերի ուղղու-
թյունը, վորի համար շարքացանն առաջին անգամ անց են կացնում
նախորդը նշված կամ գծված ուղղությամբ: Ուղիղ շարքերը հե-
տագայում ապահովում են մշակութան մեքենայացումը:

ՉՄՌՑԱՆՔ

Գազարի վաղահաս բերք ստանալու համար, անհրաժեշտ է
կատարել ձմռանը: Բանջարաբուծական ինստիտուտի վործերը
ցույց են տվել, վոր ձմռանց գազարը գարնանն ավելի լավ է
ազատագրվում հողի կուտակած գարնան և ձմռան խոնավությու-
նը, ավելի արագ է զարգանում և տեխնիկական հասունացման
գազարը (վորը վաճառվում է փնջեր կապած ձևով) տալիս է 15—20
օր ավելի շուտ:

Վերջին տարիներում գազարի ձմռանը լայն կերպով
արմատացել է մեր խորհրդային և կոլտնտեսութուն-
ների պրակտիկայում: Որինակ՝ Մոսկվայի մարզի յենինյան յըբ-
ջանի «Կարմիր Աստղ» կոլտնտեսութունում 1934 թվին ձմռա-
ցան գազարը 19 օրով շուտ է հասել գարնանացան գազարից:

Ձմռան գազարի հաջողութունը հիմնականում կախ-
ված է նրա համար պահանջվող պարտախիտիկայի ձիշտ կիրա-
ռումից:

Գազարի ձմռանքի հաջող վործեր ունենք նաև Հայաս-
տանում, մասնավորապես Կոտայքի յըջանում, 1933 թ. աշնանից:

Իրական արդյունքներ է տալիս ձմռանը նաև Լենինա-
կանում, միայն թե ցանքը պետք է անպայման կատարել տե-
սակավոր սերմերով, վորովհետև տեղական վոչ գտաստրա սերմե-
րը ձմռանի դեպքում տալիս են վորձա:

Ձմռանի համար ամենալավը «Նանտակի» սորան է:

Ձմռան գազարի պահանջը հողի նկատմամբ, նրա բեր-
րությունը և մշակումը, պարարտացումը, ցանքաշրջանառության
տեղը նույնն են, ինչ վոր գարնանացան գազարինը:

Անհրաժեշտ է առանձնակի ուղղորութուն գործնել հողա-
մասի դիրքի վրա: Հողամասը պիտի լինի հարթ, քիչ բարձր՝ փոքր
թեքությամբ, հակառակ դեպքում գարնանը սերմերը կարող են
վորողվել հալած ձյան ջրերով: Միանգամայն անպետք են փոս,
ցածրադիր հողամասերը, վորոնց մեջ գարնանը լճանում են ձյան
ջրերը և այդ պատճառով կարող է տեղի ունենալ սերմերի ու
ծիւրի նեխում:

Ձմռանցին պետք է քամադրել մոլախոտերից միանգամայն
ազատ հողամասեր: Մոլախոտերով վորակված հողամասերը ձմռա-
ցանի համար պիտանի չեն, վորովհետև գարնանը մոլախոտերը կա-
տուց են կանցնել բույսի գարգացումը կամ միանգամայն խեղդել
նրան:

Չմուսնի համար ավելի լավ է տրամադրել վաղահաս կուլտուրաներից (վաղահաս կաղամբ, վարունգ, վաղահաս կարտոֆիլ) ազատված այն հողամասերը, վորոնք առատ պարարտացված են դոմադրով: Նախորդ կուլտուրաների բերքահավաքից հետո պետք է կատարել խողանավար՝ 8—10 սանտիմետր խորությամբ՝ մոլախոտերը վոչնչացնելու և խոնավութունը պահպանելու նպատակով:

Այնուհետև սեպտեմբերի վերջին, հոգո, նայած վաղերաշերտի հողորության, վարում են լրիվ խորությամբ Յանքից առաջ կուլտիվացիա յեն կատարում 8—10 սանտիմետր խորությամբ, մացնում են հանքային պարարտանյութերը և յերկու յերես լավ փոցխում:

Չմուսնի ժամանակ առանձնակի նշանակութուն ունի ցանքի ժամկետը: Յանքի հաջողության համար ամենադիտալորն այն է, վոր սերմերն աշնանից չծրեն, այլապես գարնանը կստացվի վորձաբույսերի մեծ տոկոս, կամ թե չե ժամանակից շուտ դուրս յիկած ծիւրը կարող են ցրտահարվել: Այդ պատճառով, պարարտի ձմուցանը կատարվում է վերջնականապես ցրտերն ընկնելուց 3—5 որ առաջ: Սորհրդային Միության միջին գոտու համար զազարի ձմուցանի որինակելի ժամկետը կարող է համարվել նոյեմբերի առաջին տասնորյակը: Նույնը նաեւ մեր լեռնային և նախալեռնային գոտիներում:

Չմուսնի ժամանակ ցանքի խորությունն ավելի պակաս պետք է լինի, քան գարնանացանի, այն է՝ 0,5—1 սանտիմետր: Գարնանը ձյան հալքի ժամանակ ջուրը քաշում է սերմերն ավելի խորը հողի տակ և ստացվում է ցանքի նորմալ խոնավութուն:

Չմուսնի զազարի ցանքի նորման 20—25 տոկոսով ավելի բարձր պետք է լինի գարնան ցանքից, վորովհետև գանազան պատճառներից ձմուցանը կարող է սերմերի վորոշ տոկոսը ցրտահարվել և փչանալ:

Չմուսնի զազարից վաղահաս բերք ստանալու համար, պետք է մշակել վաղահաս սորտերը, ինչպիսին են՝ «Նանտակալա», «Գերանդա» և «Շատեն»:

Ուշահաս սորտերը, ինչպես՝ «Վալերիա»-ն, «Վորոբյուսկայա»-ն և մեր տեղական զազարները ձմուցանի համար բոլորովին չպետք է ոգտագործվեն:

ԳԱԶԱՐԻ ԽՆԱՄՔԸ

Գազարի խնամքը բույսի աճեցողության ամբողջ ժամանակաշրջանում կայանում է փխրեցման, քաղհանի և ծիւրերի նսարացման մեջ:

Նորմալ պայմաններում գազարը ծլում է ցանքից 14—18 որվա ընթացքում: Այդ ժամանակաշրջանում մոլախոտերն ավելի արագ են դարգանում, քան կուլտուրական բույսերը և նրանց դեմ ժամանակին պայքար չկազմակերպելու դեպքում, բոլորովին խեղդում են կուլտուրական բույսերը:

Գազարը սալաթի սերմերի հետ ցանելու դեպքում, յերբ նա ծլում է և նշմարվում շարքերի ուղղությունը, կատարում են առաջին միջարքային փխրեցում:

Փխրեցումով վոչնչանում են մոլախոտերը և հողը խոնավ է փուխր վիճակումն է մնում: Փխրեցումը հատկապես կարևոր է ծանր հողերում, վորոնք ընդունակ են առաջացնել հաստ կեղև, վորովհետև այս դեպքում ողի պակասության պատճառով թույլ է ընթանում բույսի համար անհրաժեշտ սննդանյութերի նախապատրաստումը:

Գազարը ծիւրուց 3—4 որ հետո անհրաժեշտ է միջարքային տարածությունները յերկրորդ անգամ փխրեցնել: Հետագայում միջարքային տարածությունների փխրեցումը գարնան և ամռան սեզոններում կրկնում են մի քանի անգամ (վոչ պակաս չորս անգամից), մանավաճ ուժեղ անձրևից կամ ջրելուց հետո: Հողի միջարքային փխրեցումը կատարվում է ձիու № 8 պլանետով, «Ուկրաինկա» ցաքանով, ինչպես և № «1 Վիմ» կուլտիվատորով:

Տնտեսություններում վերոհիշյալ մեքենաների բացակայության դեպքում միջարքային մշակումը պետք է կատարել ձեռքի պլանետով, իսկ ծայրահեղ դեպքում գործադրել ձեռքի հողուրագներ:

ՔԱՂՀԱՆ ՅԵՎ ՆՈՍՐԱՅՈՒՄ

Բացի միջարքային տարածություններում յեղած մոլախոտերի վոչնչացումից, քաղհանվում են նաև շարքերում միջբուսային տարածությունները:

Շարքերի քաղհանն ամառվա ընթացքում պետք է կատարել 2—3 անգամից վոչ պակաս, նայած հողամասի շատ կամ քիչ քաղհանու լինելուն:

Աւանձնապես շատ քաղհանոտ հողամասերում ամառվա ընթացքում կատարվում է 3—4 քաղհան:

Գազարը ցանկույց 25—30 որ հետո, յերբ առաջանում են յերկրորդ իսկական տերևները, կատարվում է բույսի առաջին նոսրացումը (նկ. 6), վորը նպատակ ունի զազարի բույսն ապահովելու վորոշ սնման մակերեսով: Տարածության վրա բույսերի ճիշտ բաշխումը հնարավորությունն է տալիս սննդաբար նյութերի ավելի համահավասար ոգտագործմանը և արմատապտղի ուժեղ աճեցմանը: Ուշ կատարած նոսրացումն առաջացնում է բերքի մեծ կորուստ, վոր յերբեմն հասնում է 20—30 տոկոսի: Նվազ բերքատու հողամասերում առաջին նոսրացման ժամանակ բույսը բույսից թողնում են 1—2 սմ հեռավորության վրա: Յերկրորդ նոսրացումը կատարվում է արմատը գործածելու համար պիտանի լինելու շրջանում, և այդ ժամանակ տրվում է վերջնական միջրուսային տարածությունը, վորը կախված է գազարի տեսակից և հողի բերքատվությունից:

Ավելի բերքատու հողերում առաջին նոսրացումը կատարվում է նոսրացվելիք արմատները գործածության համար պիտանի լինելու ժամանակ և հետագայում կրկնվում է 2—3 անգամ ամառն ընթացքում:

Յեթե նպատակ չկա նոսրացումից ստացված արմատները սննդի համար ոգտագործելու, այդ դեպքում հենց առաջին նոսրացման ժամանակ բույսերին տրվում են վերջնական հեռավորությունները: Հյուսիսային և միջին գոտու շրջանների պայմաններում, նայած գնդարի տեսակին, «Նանտակայա», «Շանտենե» և «Գերանդա» սորտերի համար 3—4 սանտ. տարածություն, իսկ «Վալերիա» ու «Վարբրովսկայա» և նման աշնան տեսակների վերջնական տարածությունը պետք է լինի 6—7 սմ:

Հյուսիսային կովկասի և Ուկրաինայի հարավային շրջաններում, ինչպես և մեզ մոտ, վերջնական նոսրացման ժամանակ տալիս են ավելի մեծ միջրուսային տարածություններ, որինակ՝ կարճ տեսակներին՝ 8 սմ, յերկարներին՝ 10 սմ:

Ցանքի խտության վրա ազդում է նաև հողի բնույթը: Լավ իրացված կավա-ավազային, տորֆային և փուխր հողերի վրա տրվում է ավելի փոքր տարածություն, իսկ ծանր, կապակցված հողերում տարածությունը պետք է ավելացնել:

Գազարի նոսրացումը սովորաբար կատարվում է ձեռքով, սակայն այդ նպատակի համար, շաքարի ճակնգեղի որինակով, ոգտա-

գործում են «Ուկրաինկա» ջաքանը, վորի թաթերի դասավորումը նախապես ստուգելով՝ թողնում են մեքենան շարքերի հակառակ ուղղությամբ և առաջացնում բույսերի առանձին փնջեր, վորոնք և քաղհանվում են ձեռքով: Յուրաքանչյուր նոսրացումից հետո անհրաժեշտ է միջարքային տարածությունները փխրեցնել, վորովհետև նոսրացման ժամանակ հողն ուժեղ կերպով ամրանում է, իսկ արմատապտուղների ուժեղ և նորմալ զարգացման համար անհրաժեշտ է, վոր հողը միշտ պահպանվի փուխր և սղախոտաբեց մաքուր վիճակում:

Գազարի մշակման աշխատանքների վերջը կարելի չէ համարել այն ժամանակը, յերբ բույսերը զարգանալով լցնում են միջարքային տարածությունները:

Մեզ մոտ՝ Հայաստանում գազարի շաղացան մշակության դեպքում բոլոր աշխատանքները համարյա թե կատարվում են ձեռքով. դա պահանջում է մեծ քանակությամբ բանուժ և զբժվարացնում մշակությունը: Անհրաժեշտ է ամենուրեք անցնել գազարի շարքացանի ձևերին և մշակության աշխատանքներն ստախանովյան մեթոդներով վերակառուցել ու սացիոնալիզացիա մացնել, լայն չափերով կիրառելով մեքենաների ոգտագործումը:

ՁՄԻՅԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Վաղ գարնանը՝ ձյունը հալչելուց անմիջապես հետո՝ առաջին հնարավորության դեպքում, անհրաժեշտ է գազարի ձմրացանքերը 1—2 յերես փոցխել զիզադ փոցխով: 1—2 յերես փոցխումը կատարվում է շարքերին ուղղահայաց կամ անկյունադժով. նպատակ ունենալով կանխելու կեղևակալումը, վորը բույսի ծման վրա կործանիչ ազդեցությունն է թողնում:

Ձմռացանքի հաջողության ամենալավ յերաշխիքներից մեկը վաղ գարնանը ժամանակին կատարած փխրեցումն է:

Վորովհետև ձմռացան գազարը մշակվում է ամառն ոգտագործման համար, ուստի նոսրացումը կատարվում է արմատն ոգտագործելու համար պիտանի լինելու ժամանակ և կրկնվում է մի քանի անգամ: Ձմռացան գազարի մնացած, հետագա խնամքը վոչնչով չի տարբերվում գարնանացանի խնամքից:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել միջարքային տարածությունների ժամանակին քաղհանելու և փխրեցնելու վրա:

Ինչպես վերևում ասվեց, գաղարի մասնակի խրոցումն սկզբում է նոսրացման հետ միասին, յերբ մատղաշ արմատապտուղների հաստությունը հասցնում է 1,5--2 սմ-ի: Այս վիճակում քաղվելիք արմատապտուղների հավաքն սկսում են գաղարի ցանքից 2—2,5 ամիս հետո և պարբերաբար շարունակում ամբողջ ամառվա ընթացքում՝ 2—3 անգամ: Շարքերը նոսրացնելու ժամանակ սպառման համար պետք է հավաքել ավելի խոշոր արմատները շարքի խիտ տեղերից: Հավաքելուց հետո գաղարը պետք է տեսակավորել, փնջեր կապել 10—20 հատով ամեն մեկում, լավ լվանալ և ապա տալ գործածության համար:

Փնջերով կապած գաղարը մոտիկ վայրեր ուղարկելու դեպքում տեղափոխում են առանց տարախի կամ դարսած 20 կգ տարողություն ունեցող կողմերի և արկղների մեջ: Այս վիճակում գաղարը հնարավորության սահմաններում շուտ պետք է ոգտագործել, զորովհետև նույնիսկ 3—5 օր պահելու դեպքում նուրբ արմատները խառամում են և կորցնում իրենց սննդային արժեքը: Ձմռան գաղարն ամբողջովին սպառման պետք է յենթադեկ սնտովա առաջին կիսում, վորովհետև ամառվա յերկրորդ կիսից կարող են առաջանալ մեծ քանակությամբ վորձատու բույսեր:

Գաղարի բերքը վերջնականապես հավաքվում է աշնանը — ցրտերն ընկնելուց առաջ: Բերքահավաքի ժամկետները դանաղան շրջաններում կախված են տվյալ շրջանի կլիմայական պայմաններից: Միջին գոտու պայմաններում գաղարի բերքահավաքն սկսվում է սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 5-ը: Մեզ մոտ գաղարը հավաքվում է հոկտեմբերի վերջին: Գաղարն աշնան վաղ ցրտահարություններին ավելի դիմացկուն է, քան ճակնդեղը, քրտ համար ել նրա բերքը հավաքվում է ճակնդեղից հետո: Գաղարի բերքահավաքը չի կարելի ձգձգել մինչև աշնան ուժեղ ցրտերը, վորովհետև ցրտահարված արմատները հետագայում, ձմռան պահելու ժամանակ, շատ շուտ են փչանում:

Բերքահավաքի ժամանակ հատուկ ուշադրություն պետք է գործենել վորակով հավաքելու վրա:

Գաղարն առհասարակ ձմռանը վատ է դիմանում և ամենափոքր ջարդվածքներից ու մեխանիկական հարվածներից, սակեռտներում առանձնապես շուտ է փչանում և փտում: Գաղարի

կորուստների մեծ մասը ձմռան պահելու ժամանակ տուժ է գալիս անխնամ բերքահավաքի հետևանքով: Բերքահավաքի ժամանակ արմատները պետք է խիտ ուշադրությամբ քանդել՝ առանց կտրատելու և փաստելու, թափ տալով վրայի հողերը և ճիշտ կրակել թփերը: Մինչև վերջին ժամանակները գաղարի բերքահավաքը կատարվում է ձեռքով կամ բահերով: Այժմ այդ աշխատանքի յեղանակը համարվում է ծանր և ցածր արտադրողականություն ունեցող, ուստի հաշվի առնելով այս ասպարիզում բանջարաբուծական խոշոր խորհանտեսությունների և կոլտնտեսությունների ունեցած հարուստ փորձը, անհրաժեշտ է գաղարի բերքահավաքը կատարել այնպիսի գործիքներով, ինչպիսին են լինը հանած գութանը, ճակն դեղ քանդող մեքենան և արմատները չկտրատելու համար հարմարեցված վարող այլ գործիքներ: Գանդած արմատապտուղները պետք է զգուշությամբ թափ տալ հողից մաքրելու համար, թափ տալու ժամանակ չի թույլատրվում արմատներն իրար խփել կամ դանակով մաքրել:

Հավաքած արմատները դարսում են փոքր կույտերով՝ թփերը կտրատելու համար: Աշնանը գործածվելիք գաղարի թփերը կարելի յ է կտրատել ձեռքով վորորելով: Ձմռանը յերկար ժամանակ պահվելիք արմատապտուղների թփերը պետք է անպայման կտրել դանակով: Բացի սերմացու գաղարից, թփերը կտրատում են հիմքից, իսկ սերմացու գաղարի թփերը կտրում են հիմքից 1—1,5 սանտիմետր բարձրությամբ:

Թփերը կտրատելու հետ միաժամանակ կատարվում է արմատների տեսակավորումը, ըստ վորում առողջ, նորմալ ձևի և մեծության արմատները, վորոնք պիտանի յեն ձմռան պահպանման համար, դարսվում են մի կողմի վրա: Առանձին կույտերում գաստվորում են թեթև փասված, տձև, խտտանված արմատները, վորոնք գործ են ածում աշնանը և ձմռան առաջին կեսում: Յերրորդ կույտում անջատվում են ուժեղ փասվածները, կիտահաս, ճյուղավորված, մանր և հիվանդության նշաններ ունեցող արմատները, վորոնք ոգտագործվում են անասունների կերի համար: Արմատապտղի ապրանքային մասը պարկերով և արկղներիով տեղափոխում են պահեստները:

Արմատապտուղների բերքահավաքը պետք է կադմակերպել այն հաշվով, վոր հնարավոր լինի հանված արմատների թփերը կտրել նույն օրը: Հանված արմատապտուղները նույնիսկ կարճ ժամանակամիջոցում չի թույլատրվում դաշտում բաց թողնել,

փորովհետև նրանք արագ կերպով թառամում են և, հետևապես, պահպանման ժամանակ մեծ կորուստներ են տալիս: Այդ պատճառով, յեթե տնտեսութունը հնարավորութիւնը չունի հավաքած բերքը նույն օրը փոխադրել մշտական պահելու տեղը, հարկավոր է կույտերի յերեսը տերևներով ծածկել և 8—9 սմ հող լցնել վրան:

ՍԵՂԱՆԻ ԳՆԱՍՏՐԻ ՍԵՐՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Լավ սորտը բարձր բերք ստանալու ամենալավ յերաշխիքներից մեկն է: Ապացուցված է, վոր վոչ տեսակավոր սերմերը տեսակավոր սերմերով փոխարինելուց բերքը բարձրանում է մինչև 50% ի նափով: Դա նշանակում է, վոր միանման բերքի հողերում, միևնույն քանակի աշխատանք թափելով և հալասաք քանակի պարարտանյութ մտցնելու դեպքում, վոչ տեսակավոր սերմերը տեսակավոր սերմերով փոխարինելով բերքն ավելանում է կիսով չափ: Բացի բարձր բերքատուութիւնից, տեսակավոր սերմերից ստացված բանջարեղենն ավելի համեղ է և սննդարար:

Սորհտնտեսութիւններն ու կույտնտեսութիւնները, յեղնելով վերոհիշյալից, պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները, վորպէսզի այնտեղ, վորտեղ դեռ մինչև այժմ գործ են անվում վոչ տեսակավոր սերմեր, փոխանակեն տեսակավոր սերմերով:

Միանգամայն ապացուցված է, վոր յերբ սերմացուի համար վերցնում են անխտիր բոլոր արմատները, առանց ընտրութեան, այդ դեպքում ամենալավ սորտերն անգամ վերասերվում են կամ, այլ, կերպ ասած, սորտերը կորցնում են իրենց գոտասորտութիւնը:

Վորպէսզի սորտը չայլասերվի, ամեն անգամ պահանջվում է, վոր սերմացուի համար ընտրվեն ամենալավ, միատեսակ և փոփոխակի համար տիպիկ արմատները:

Տիպիկ արմատների առանձնացման աշխատանքը կոչվում է ընտրութիւն:

Վերոհիշյալից յերևում է, վոր ընտրութիւնն անհրաժեշտ է, վորպէսզի տեսակավոր սերմերի մեջ պահպանվի նրանց արժեքավոր հատկութիւնները և թույլ չտրվի նրանց այլասերում:

Արմատների ընտրութեան ժամանակ պետք է իմանալ, վոր վորքան արմատները լավ են ընտրված, տիպիկ են և միատեսակ, այնքան այդպիսի սերմերից ստացված յեղանյութը (տնկանյութը) միատեսակ և ընտիր կլինի:

Սերմացուի համար գազարի արմատների ընտրութիւնը

կատարվում է յիրկու անգամ՝ աշնանը՝ բերքահավաքի ժամանակ և գարնանը՝ սերմացուն տնկելուց առաջ:

Արմատների աշնանային ընտրութիւնն այն է, վոր սերմացուի համար թողնում են միայն առողջ և տիպիկ արմատները, իսկ հիվանդ, վնասված, այլանդակ արմատները խոտանվում են: Սերմացուների ընտրութեան ժամանակ ամեն մի սորտի վերաբերյալ անհրաժեշտ է դեկավարվել հետևյալ կանոններով:

«Նանտակի» գազարի դեպքում ընտրվում են ուղիղ, զլանաձև, բուրժ ծայրով, հարթ մակերեսով, մանր վոսպնյակներով և վառ-կարմիր-նարնջագույն արմատները: Սոտանվում են գլանաձևից շեղված սրածայր, ճեղքված, ճյուղավորված, հիվանդ, թույլ գունավորված արմատները:

«Նանտակի» գազարի սելեկցիոն աշխատանքը տարվում է Բանջարաբուծական համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի սելեկցիայի և սերմաբուծութեան բաժնում (ВНИОС), վորտեղից կարելի յէ ստանալ այդ տեսակի որիգինալ սերմերը:

«Գերանդա» գազարի դեպքում ընտրվում են կարճ—կոնաձև, բուրժ ծայրով, հարթ մակերեսով, փոքրիկ գլխով և վոչ խոր վոսպնյակներով արմատներ: Սոտանվում են սրածայր, խիստ զարգացած վոսպնյակներով, կոպիտ գլխով, ճեղքվածք ունեցող, աննորմալ և հիվանդ արմատները:

«Շանտանե» գազարի դեպքում ընտրվում են բուրժ ծայրով, հարթ, փոքր գլխով, վոչ խոշոր վոսպնյակներով, վառ գունավորված արմատները: Սոտանվում են տձև, սրածայր, ճյուղավորված, կոպիտ գլխով և խոշոր միջուկ ունեցող արմատները:

«Վայերիա» գազարի դեպքում՝ իբրև սերմացու վերցնում են ուղիղ ձևի հավասարաչափ բարակող, սրածայր, փոքր գլխով, վառ գունավորումով, միջին մեծութեան, դեղին միջուկով արմատները: Սոտանվում են տձև, թույլ գունավորված, կոպիտ գլխով, ճյուղավորված, հիվանդ և աննորմալ արմատները:

«Վորոյրյովսկայա» գազարի սերմացուի համար վերցնում են ուղիղ կոնաձև, գլխի մոտ քիչ լայնացած, փոքրիկ գլխով, վառ գույնի, մանր վոսպնյակներով և վարդագույն միջուկով արմատներ: Սոտանվում են տձև, բարակ, խոշոր վոսպնյակներով, կոպիտ գլխով աննորմալ, հիվանդ արմատները:

Առանձնակի ուշադրութիւն պետք է դարձնել մեր տեղական ուշահաս գազարների սերմացուների ընտրութեան վրա, վորովհետև նրանք իրենցից ներկայացնում են մի քանի սորտերի՝

դեղին, կարմիր և նարնջագույն գազարների խառնուրդ, վորոնք միատեղ խառը անկելու դեպքում տալիս են շատ խայտարեղ երդող կատ: Յեղնելով կարմիր-նարնջագույն գազարների վորահական բարձր հատկություններից, մեր տեղական գազարներից սերմացու ընտրելիս առաջնությունը պետք է տալ այդ տեսակների: Մեզ մոտ անհրաժեշտ է անպայման անցկացնել այն դրույթը, վոր սերմացուն լինի ընտրված միանման՝ թե գույնի և թե արմատապուղի ձևի ու միջուկի տեսակետից: Այնպես վոր մեզ մոտ, մինչև տեղական գազարների սելեկցիոն աշխատանքների հաջող ավարտումը, անհրաժեշտ է սերմացուներն ընտրել գալտում՝ բոտ արմատապուղի ձևի, գույնի և տիպիկություն:

Սերմացու արմատապուղիների քաշը կրոր վորոհ-խակների համար պետք է լինի 20 գրամից վոչ պակաս, կիտայերկար սորտերի համար՝ 35—40 և յերկար սորտերի համար 50 գրամից վոչ պակաս, գրանից մանր արմատներն ավելի լավ է չընտրել սերմացուի համար: Ինչ վերաբերում է արմատների ավելի խոշոր չափերին, պետք է ասել, վոր խոշոր արմատները կարելի չէ ընտրել միայն այն դեպքում, յիթե նրանք համապատասխանում են սորտի տիպիկ պահանջներին:

Սերմացուի համար ընտրված արմատները պետք է անմիջապես փոխադրել գալտից և դարսել մշտական պահելու տեղում: Գարնան ընտրությունը կայանում է նրանում, վոր ձմռան պահելուց հետո արմատները հանում են բանջարապահեստից և ստուգում, խոտանելով բոլոր հիվանդները:

Առողջ արմատները նորից ընտրում են բոտ գունավորման և միջուկի չափի: Բոլոր այն արմատները, վորոնք չեն համապատասխանում ընտրության պահանջներին խոտանվում են: Միջուկի չափը և գունավորումը վորոշում են, կտրելով ծայրերը: Արմատի ծայրերի մինչև մի չորրորդական մասի կտրելը սերմի բերքատվություն վրա վոչ մի բացասական ազդեցություն չէ թողնում, պայմանով, յիթե թարմ կտրվածքները քիչ թառամեցվեն և ծածկվեն ձեռած ածխի փոշով:

Սերմացու արմատների ընդլայնական կտրելը միանգամայն անթույլատրելի չէ:

Յեթե վերջնականապես ընտրված արմատները բանջարապահեստից հանելուց 2—3 օրվա ընթացքում գալտ չեն փոխադրելու և չեն անկելու, ապա անպայման պետք է ծածկվեն հողով կամ ավազով:

Ամենից առաջ պետք է իմանալ, վոր գազարը խաչաձև փոշոտվող բույս է: Դա նշանակում է, վոր սերմերի կազմակերպման համար անհրաժեշտ է, վոր մի բույսի ծաղկափոշին փոխադրվի մյուս բույսին՝ փոշոտելու համար: Ստույգ հայտնի լի, վոր միջատները կարող են թռչել մի տեղից մյուս տեղը 2—2.5 կիլոմետր հեռավորություն վրա: Յեթե այդ տարածության վրա անկված լինեն յերկու տարբեր սորտերի սերմացուներ, ապա ծաղկափոշու տեղափոխումը մի սորտից մյուսը կկատարվի նույն միջատների միջոցով և այդ սորտերի սերմացուներն իրար փոխարինարար կփոշոտեն և նրանց սերմերից կստացվեն վոչ թե մաքուր տեսակներ, այլ խառնուրդ, այդպիսով սորտը կփչանա: Այս բանը պետք է լավ յուրացնել և սերմնարուծության ժամանակ թույլ չտալ, վոր 2 սորտի սերմացու արմատներն իրար մոտ տնկին:

Առանձնապես անթույլատրելի չէ աճեցնել յերկու սորտի սերմացուներ մի անտեսության մեջ: Այս դեպքում, բացի սորտերի փոշոտվելուց, անխուսափելի չէ սերմերի խառնվելը՝ փոխադրելու, կալսելու կամ սերմացուն մաքրելու ժամանակ:

Գազարի սերմացուն պահանջում է հողից մեծ քանակություն մը սննդանյութեր, փխրություն, խոնավություն, այդ պատճառով սերմացուի հողամասը լավ պարարտացրած պետք է լինի: Մեահողերում մտցվում և հանքալին պարարտանյութերի հետևյալ քանակը՝ 3—4 ցենտներ սուպերֆոսֆատ, 2—2.5 ցենտներ կալիումի աղեր և 3 ցենտներ ծծմբաթթվային ամոնի:

Պարարտանյութերն ավելի լավ է մտցնել վոչ թե համատարած, այլ շարքերով՝ արմատների տակ: Որդանական նյութերով աղքատ հողերում մտցվում է գոմազը, հեկտարին 50—60 տոնն, գոմազը տրվում է աշնանից: Գարնանը, անկելուց առաջ, ամեն արմատի տակ մտցվում է 12—15 գրամ սուպերֆոսֆատ: Սուպերֆոսֆատի մտցնելն ոժանդակում է սերմերի հավասար հառուցմանը:

Սերմացուի համար հողամասը պետք է հերկել և յեթե գոմազը է մտցվում, նաև պարարտացնել աշնանից:

Գարնան մշակումը կայանում է փրբեցնելու (եկատիրպատորով), փոցխելու և մարզեր պատրաստելու մեջ, վորից հետո պետք է գծաչարով անցկացնել տնկվելիք շարքերի ուղղությունը (կատարել մարկիրով):

Մարկիրովկայի ժամանակ շարքերի մեջ տարածութունը
թողնում են այն հաշվով, վոր հետագա աշխատանքների ժամա-
նակ շարքամիջեռում հնարավոր լինի անցկացնել մերկնայացրած
մշակում: Այդ նկատառումով ամենալավ տարածութունը համար-
վում է 70×50 սանտիմետր: Մեր պայմաններում սերմացուն
տնկում են նաև 60×50 սմ, 60×40 և 60×30 սմ հեռավո-
րության վրա, նայած զազարի սորտին և տեղի հողային պայ-
մաններին:

Արմատները պետք է տնկել վաղ գարնանը, դաշտ գուրս
գալու առաջին հնարավորության դեպքում: Գարնանային ցրտա-
հարություններից զազարի արմատները չեն վախենում: Արմատ-
ների տնկման ուշացումը խիստ նվազեցնում է սերմերի բերքը:
Արմատների տնկման ամենալավ ձևը համարվում է տնկումը
ցցով կամ բահով: Մարգերի գծերի ուղղությամբ ցցով փորում
են փոսեր և տնկում են արմատը: Բահով տնկելիս հողը բա-
հով փխրեցնում են և տնկում արմատը:

Յերկու դեպքում էլ անհրաժեշտ է արմատի շուրջը հողն
ամրացնել այնպես, վոր նրա շուրջը դատարկ տարածութուն
չառաջանա, հակառակ դեպքում արմատները չորանում և զգալի
տեղատով փչանում են:

Արմատը պիտի տնկված լինի ուղղահայաց և ամբողջովին
թաղված լինի հողում, իսկ գլուխը պետք է լինի հողի մակերե-
օին հավասար: Սա կլինի ճիշտ տնկում: Արմատը հողից բարձր
տնկելն անթույլատրելի չէ, վորովհետև շրելուց հետո հողը բա-
վականաչափ կնստի և կմերկացնի արմատապտղի մեծ մասը, վո-
րի հետևանքով սերմացուն քամիներից հետագայում հեշտությամբ
վայր կընկնի:

Յեթե տնկումը կատարված է ճիշտ, արմատներն արագ
սկսում են աճել: Առաջին փխրեցումը կուտիվատորներով կա-
տարվում է շարքերը նշմարվելու ժամանակ:

Այդ ժամանակ սերմացուները դեռ քիչ են զարգացած և,
փխրեցման հետևանքով, անխուսափելիորեն սերմացուների մի
մասը ծածկվում է հողով, այնպես, վոր անհրաժեշտ է փխրեցու-
մից հետո հողով ծածկված բույսերն ազատել հողից և միաժա-
մանակ բանալ խոր տնկած արմատները:

Փխրեցումը պետք է կատարվի հնարավորին չափ հաճախա-
կի, մոտավորապես ամեն 10—12 օրը մի անգամ ու շարունակվի
մինչև սերմացուների շարքերի միանալը:

Անհրաժեշտ է հողամասի պահպանումը փութը և մոլախո-
տներից ազատ դրության մեջ՝ սերմացուի լավ զարգացման համար
Սերմերի հասունացման համար պահանջվում է մոտ չորս
ամիս: Գազարի հասունացումը միաժամանակ տեղի չի ունենում,
այդ պատճառով սերմերը հավաքվում են տարբեր ժամանակա-
շրջանում:

Սերմացուն հասունացած է համարվում, յերբ հովանոցի
կանաչ գույնը դառնում է դարչնագույն: Հասած հովանոցները
հավաքը կատարվում է 2—3 նվագ, նայած յրանց հասունանա-
լուն: Վերջին հավաքի ժամանակ հանվում է ամբողջ բույսը:

Հավաքած հովանոցները տանում են չորանոց, վրտեղ
փռում են բարակ շերտով և լրացուցիչ չորացնում:

Յերկարատե անսպաստ յեղանակների դեպքում հովանոց-
ների չորացմանն անհրաժեշտ է մեծ ուշադրութուն դարձնել:

Գազարի հովանոցներն ուժեղ կերպով խնամվություն են
կլանում, և յեթե այդ չորացման ժամանակ սրանց չխառնեն, կա-
բող են բորբոսնել, և սերմերը կկորցնեն իրենց ծլունակութունը:

Գազարի սերմացուն կախում են սովորական կախող մե-
քենայ վ, վորն աշխատում է ձիու կամ տրակտորի ուժով:

Սերմերի առաջին մաքրումը կատարվում է սովորական
քամահարով: Առաջին գտման ժամանակ սերմերը մաքրվում են
փոշուց և խոշոր խառնուրդներից: Աշխատանքը կատարվում է
թույլ քամու ժամանակ:

Հետագա գտումն այն է, վոր սերմերն ազատվում են իրենց
վրա գտնվող փշիկներից: Այդ աշխատանքը կատարում են տրա-
բող մեքենաներով: Գոյություն ունի զազար տրորող հատուկ
մեքենա (սլանդե), կարելի չէ ոգտագործել նաև յերեքնուկի
տրորիչ:

Սերմերը քիչ լինելու դեպքում փշիկների տրորումը կա-
տարվում է կտավի տպարակների մեջ, վորոնք լցնում են սերմե-
րով և տրորում, մինչև վոր նրանք աղատվեն փշիկներից: Դրա-
նից հետո նորից սերմերն անց են կացնում տեսակավորող քամ-
հարով և մաքրում են զանազան խառնուրդներից ու փոշուց:
Բայց քամահարի միջոցով զժվար է ազատել սերմերը հովանոցի
ձեռքորդներից և ուրիշ մանր կեղտերից, զրա համար էլ սերմերը
մաքրում են մաղիկով:

Վերջնականապես մաքրելուց հետո սերմերը չորացնում են
ու լավ չորացնելուց հետո լցնում պարկերը: Յարկի-հատիկե-

կաները դնում են մեկը պարկի մեջ, մյուսը կտառում են պարկի դրսի կողմից:

Յարլիկների վրա նշանակում են փոփոխակի տնուներ, սերմի վորակը. տնտեսութունը և սերմերի բերքահավաքի ասորին, վորից հետո սերմերն անցնում են պահեստ:

Սերմերը պետք է պահել չոր և լավ ողափոխվող շենքերում: Խոնավ, վառ ողափոխվող շենքերում սերմերը հեշտությամբ փչանում են:

Բուրբոլին անթույլատրելի յե սերմերի պահելը պահեստի հատակին կամ դարակներում լցված վիճակում, յեթե շերտը բարձր է 50 սանտիմետրից: Պարկերով պահելու դեպքումն էր պարկերը դարսվում են իրար վրա՝ 4 դարսից վոչ ավելի:

Միանգամայն անբույստեի յե սերմեր պտեկը մոդե հոտակի վրա, յիմեն նրանք պտեկերի մեջ. թե ուղղակի նստակից լցրած:

Այդպիսով, դադարի սերմերի բարձր բերքատվությունը պահանջում է.

1. լավ մշակված, պարտադրած հող.
2. սերմացուի ժամանակին և ճիշտ տնկում.
3. հողամասի կանոնավոր մշակում և սերմացուների անհյուսիսյան ամբողջ շրջանում մակերեսը փխրուն վիճակում պահելը:

Այս պայմանների պահպանման դեպքում գագարի սերմի բերքը կարելի յե հասցնել 4—5 ցենտների մի հեկտարից:

Սերմերի գոտաորտությունը պահպանելու համար անհրաժեշտ է.

1. կտտարել սորտի համար տիպիկ արմատների ճիշտ ընտրություն, լավ հիշելով, վոր ընտրության ժամանակ թույլ տված ամեն մի շեղում ուժեղ կերպով գցում է հետագա բերքի վորակը.
2. ամեն մի տնտեսությունում սերմնարուձական աշխատանք տանել միայն մի սորտի հետ, վորովհետև գագարի ամենագործունյա փոշոտիչները միջատներն են, վորոնք կարող են փոշին տեղափոխել 2—2,5 կմ վրա:

Ինչպես հալանի յե, խաչաձև փոշոտված սորտերը կորցնում են իրենց սորտի հատկությունները, իսկ մենք գիտենք, վոր մաքուր սորտը բարձր բերքատվության հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում:

Բանջարարուձական կոլտնտեսությունները և խորհրտեսությունները պետք է միանգամայն հրաժարվեն վոչ տեսակա-

վոր, իսակ սերմերից և անցնեն մաքուր գոտաորտ սերմերի ցանքին. այդ է պահանջում մեզանից բերքատվության բարձրացման համար մղվող պայքարի հաջողությունը:

ԳՁԱՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արմատապտուղների համար ամենամեծ վտանգը ներկայացնում են ձմաան պահելու ժամանակ առաջացած հիվանդությունները, վորոնք յիրբեմն փչացնում են ամբողջ բերքը: Ամենից տարածված հիվանդությունը համարվում է այսպես կոչված սպիտակ փտումը կամ սկլերոցինիա, վորը մնասում է համարյա բոլոր բանջարանոցային կուլտուրաներին: Մեծ ավերածություն է առաջացնում հիվանդությունը գագարի սերմացուների վրա:

Վնասված բույսերն աչքի յեն ընկնում իրենց թառամած տեսքով: Յողունի վրա առաջանում են դարչնագույն բծեր, վորոնք շուտով ծածկվում են սկլերոցինիայի սպիտակ սնկերով:

Այնուհետև սնկի վրա առաջանում են մանր, սև գույնի ուտուցիկներ (սկլերոցիաներ), հիվանդ բույսն արմատավզի մոտից հեշտությամբ ջարդվում է և այդտեղ սովորաբար նկատվում է սնկի ամենաուժեղ դարգացում: Պահեստներում առաջանալու դեպքում սկլերոցինիան տալիս է հիվանդության արտահայտման նույն պոտկերը, ինչ վոր դաշտում:

Վարակված արմատապտուղները ծածկվում են սպիտակ սընկերով և սկլերոցիաներով: Վարակը տարածվում է սովորական շփման միջոցով, վորի հետևանքով հաճախ նկատվում է հիվանդ բույսերի առանձին ոջախներով դասավորված լինելը:

Հիվանդություն առաջացնող սունկը շատ յերկար ժամանակ կարող է պահել իր կենսունակությունը, վորի պատճառով սկլերոցինիայի դեմ պայքարելը դաշտի պայմաններում շատ դժվար է: Պայքարի բոլոր միջոցառումները հիմնակ սնում հետևյալն են.

1. սերմացուների և պահվելիք արմատների ընտրությունը.
2. պահեստների ախտահանումը չհանգցրած կրով (300 գր մի լիտր ջրին) կամ ֆորմալինով (12 գրամ վաճառքի ֆորմալին մի լիտր ջրին) է
3. կանոնավոր ամբարումը և պահպանումը, միանավասար ջերմության պահպանումը և լավ ողափոխությունը:

Դադարի քաց փսում հիվանդությունն առաջացնում են բակ-

անբրան' ը, վարոնք թափանցելով հյուսվածքների մէջ, քայքայում են սյւ, առաջացնելով լորձնաքանձան անդուր հոտով մասսա:

Պայքարը կարանո մ ե ցանքաչրջանառության կիրաւաման և ամբարման ժամանակ ճիշտ ակտիւ պահելու մեջ:

ԳԱԶԱՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԻ ԹԱՂԻՔԱՆՄԱՆ ԲՈՐԲՈՍ

Րիզոկտոնիա սուենկը, վորն առաջացնում է այս հիվանդութիւնը, քնասում է բույսի ստորերկրյա մասին: Հիվանդութիւնը նկատելի յի դառնում ամառվա վերջին, յիրք տերևներն սկսում են տեղ-տեղ թառամել: Արմատները ծածկվում են մուգ-մանիշակա գույն թաղիքանման սնկերով, վորոնց վրա զարգանում են մանր, դարչնագույն ուռուցիկներ—սկիւրոցիներ: Սնկի բանած տարածութեան հյուսվածքները քայքայվում և փտում են: Սուենկն ապրում է հողում:

Հիվանդ բանջարների հետ անցնելով պահեստ, բիզոկտոնիան շարունակում է զարգանալ և առաջացնում է փտում պահեստներում:

Պայքարի միջոցներն են.

1. ցանքաչրջանառութիւն.
2. բոլոր հիվանդ բույսերի վոչնչացում.
3. սերմացու և պահվելիք զազարի կանոնավոր ընտրութիւն.
4. վարակված հողի ուժեղ կրացում:

ԳԱԶԱՐԻ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԸ

Գազարի նսնճի. — Գազարի ճանճի զեղնագույն, փայլուն, յերկարաձև թրթուրները զազարի արմատի մեջ փորում են ժանգագույն անցքեր: Վնասված արմատներն սկսում են փտել: Արտաքին տեսքից փտումը կարելի յի ճանաչել տելներով թառամելուց: Գազարի ճանճը փոքր է, փայլուն, սև գույնի է զեղին թաթիկներով: Գարնանը բույսի հիմքի մոտ դնում է փոքրիկ, սպիտակ ձվեր: Մի քանի օրից ձվերից դուրս են գալիս թրթուրներ, վորոնք թափանցում են արմատի մեջ: Թրթուրը հարսնյակի յի ձևափոխվում հողում, կապելով զեղին կեղծ, բոժոժ:

Նորհրդային Միութեան միջին գոտում գազարի ճանճը առ-

լիս է յերկու սերունդ, առաջինը՝ մայիս-հունիս ամիսներին, յերկրորդը՝ հուլիսի յերկրորդ կեսին և ոգոստոսի սկզբներին:

Պայքարի միջոցներն են.

1. ձու դնելու ժամանակ բույսը ջրել սուլեմայի լուծույթով (10 գրամ սուլեմա 1Ձ լիտր ջրին).
2. ազրոձեռնարկումների ճիշտ կատարումը—վաղ ցանք, ժամանակին քաղան, նոսրացում և այլն, այն հաշվով, վոր ստացվեն ուժեղ բույսեր, վորոնք կարող են ավելի լավ զիմազրել քնասատուներին:

Իտալաուանի (բոյ-բոյ).—Իշխառանչը համեմատաբար խոշոր միջատ է (35—50 միլիմետր մեծութեամբ): Մուգ-գորշագույն, վտանների լայնացած վերջավորութիւններով (նման գետնափորիկի թաթիկների), վորոնք հարմարեցված են դետինը փորելու համար:

Իշխառանչը քնասում է զլիսավորապես հարավում, իսկ հյուսիսային շրջաններում դա ջերմոցային քնասատու յի:

Իշխառանչն ապրում է հողում, վորտեղ փորում է անցքեր և կրծում բույսի արմատները: Պայքարի միջոցներն են.

1. թունավոր գրավչանյութեր՝ ցորենը կամ յեգիպտացորենը յեփել 12% մկնդեղաթթվային նատրիի մեջ (12 կգ ցորեն կամ յեգիպտացորեն, 500 գրամ մկնդեղաթթվային նատրի և 12 լիտր ջուր): Գրավչանյութը պետք է ցրել հողամասում ցանքից առաջ և փոցիւի.
2. Աշնանը 0,5 մետր խորութեամբ փոսեր կամ առուներ փորել և յցնել ձիու թարմ ազր: Ձմեռն իշխառանչը մեծ հաճույքով մտնում է գոմաղբի մեջ:

Ցրտերն սկսելուն պիս, կամ վաղ գարնանը՝ պետք է գոմաղբը փոսերից հանել և իշխառանչը վոչնչացնել:

3. հողի կանոնավոր մշակում՝ իշխառանչի բները վոչնչանելու համար:

ԳԱԶԱՐԻ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԸ

Գազարի սերմացուի ամենագլխավոր քնասատուներից մեկը համարվում է ցիցի թրթուրը: Թրթուրները խայտարակա գույնի յեն, մուգ-մոխրագույն, կողքերից նարնջագույն գծերով և սղիտակ յեգրերով ու սև բլերով: Մածկելով ծաղկափթթութիւնը վոստայնով՝ թրթուրը քնասում է ծաղիկներին և մատաղջ սերմերին:

Քննչանով զարգացման շրջանը, թրթուրը թափանցում է արմատի ներսը և այստեղ հարսնյակի յե փոխվում:

Թրթուրների դեմ պայքարելու համար պետք է փոշոտել բույսը մկնդեղաթթվային կալցիով կամ կրաֆոսֆորային նատրիով: Գործածվում է նաև անաբաստ կամ նիկոդուստ: Սերմերը կալսելուց հետո անհրաժեշտ է բույսի մնացորդներն այրել:

Լվիճների դեմ, վորոնք յիրբեմն մեծ քանակով հարձակվում են սերմացունների վրա և նստում ծաղկափթթուլունների վրա, պայքարի միջոցը հետևյալն է. բույսը սրսկում են անաբազին սուլֆատի լուծույթով (10 լիտր ջրին 10 գրամ, ավելացնելով 4 գրամ ոճառ) կամ նիկոտին սուլֆատի լուծույթով (վորը պատրաստվում է նույն ձևով, ինչ և անաբազին սուլֆատը) կամ ծխախոտի եկատրակտով: Գործադրվում է նաև փոշոտում անաբազուսով (5 մաս անաբազին սուլֆատը լավ խառնում են 95 մաս կրի փոշու հետ):

Բացի վերևում նշված առանձին միասատուների և հիվանդութունների դեմ մղվող պայքարի միջոցներից, խոշոր նշանանակութուն ունեն նաև ընդհանուր, գլխավորապես ագրոտեխնիկական միջոցառումները: Սրանք մի կողմից անմիջականորեն ազդում են միասատուների վրա, նվազեցնում նրանց քանակը, մյուս կողմից՝ ոժանդակում են բույսի լավ զարգացմանը և հնարավորութուն են տալիս ավելի լավ դիմադրել հիվանդութուններին և միասատուներին:

Այս միջոցառումների շարքին են պատկանում.

1. աշնան հերկը.
2. բարձրորակ սերմացուի և սերմերի գործադրումը.
3. կանոնավոր ցանքաշրջանառութայն կիրառումը.
4. անընդհատ պայքարը մուլախոտերի դեմ, վորովհետև վերջիններից շատերը ծառայում են միասատուներին իրրե կեր և տարածման վայր.
5. քաղհանի ժամանակ հեռացնել և վոչնչացնել հիվանդ ու փչացած բույսերը.
6. բերքահավաքից հետո հավաքել դաշտից բույսի բոլոր մնացորդները (ոգտագործել տերևները սիլոսի համար):

Վնասատուների և հիվանդութունների դեմ պայքարելու բոլոր խնդիրներով պետք է զիմել բույսերի պաշտպանութայն մասնագետներին՝ ՄՏԿ-ներում կամ շրջանային հողբաժիններում:

Պատերախումբ.—Վնասատուների դեմ քիմիական միջոցներով պայքարելու գեպըում պետք է հիշել, վոր քիմիական նյութերի մեծ մասն ուժեղ թույներ են վոչ միայն միջատների համար, այլև մարդկանց և անասունների համար: Այս պատճառով քիմիական նյութերի գործադրման ժամանակ պետք է զգուշ լինել:

Այնատանքը կատարելիս մասնագիտական հաշուառուներնալ, աշխատանքից հետո սապնով լվանալ ձեռքերը, փոշիացրած թույների հետ աշխատելիս գործադրել ռեսպիթատորներ (կամ ծայրահեղ դեպքում քիթը և բերանը կապել մաալայով) և պաշտպանողական ակնոցներ: Բույսերի սրսկումը կամ փոշոտումն ընդհատել բերքահավաքից 15—20 որ առաջ:

Անաբազին-սուլֆատի, անաբազուստի, ծխախոտի եկատրակտի, ոճառի համար այս ժամկետը կարելի յե կրճատել:

ԳԱՋԱՐԻ ՊԱՀՆԸ

Գաղարը պատկանում է շուտ փչացող մթերքների շարքին: Գահելու ժամանակ գլխավոր խնդիրը կայանում է փչացումների ու հորուստների դեմ պայքարելու մեջ:

Կորուստներն առաջանում են մի շարք պատճառներից, վորոնցից հիմնականները հետևյալներն են.

1. պահելու ամբողջ շրջանում 6—7 ամիս արմատապտուղները կենդանի յեն մնում: Ինչպես ամեն մի կենդանի օրգանիզմ, նրանք ևս շնչում են և ծախսում դրա վրա այն օրգանական նյութերը, վորի համար մենք գաղարը պահում ենք:

Գարզված է, վոր 0 աստիճան ջերմութայն ժամանակ գաղարի շնչառությունը դանդաղում է, իսկ +3 աստիճան ջերմությունից բարձր՝ շնչառությունն արագանում է.

2. 4 աստիճանից բարձր ջերմութայն տակ արմատապտուղները յերկարատե պահելու ժամանակ սկսում են ծլել:

Մերի առաջացման և նրանց շնչառութայն համար նույնպես ծախսվում է արմատի օրգանական նյութը.

3. բարձր ջերմաստիճանի ժամանակ բույսի վրա առաջանում են սնկային և բակտերիալ հիվանդություններ, վորոնք վոչ միայն միաստիճան արմատների կորուստ են աալիս, այլև վատացնում են մնացածների պահելու պայմանները.

4. Հափազանց չոր պահեստներում ջրի գործընթացումն արմատապատուղների մակերեսից ուժեղանում է, վորից ստացվում է քաջի անցանկալի խոշոր պակասում:

5. Չերմությունը 0-ից ցածր իջնելու դեպքում բանջարները կարող են ցրտահարվել, վորի ժամանակ կարող է տեղի ունենալ բջիջների մասնակի վոչնչացում, արմատների փտում:

Այսպիսով, բանջարեղենների պահելու ժամանակ Չերմությունը և խոնավությունը վճռական նշանակություն ունեն և նրանց կանոնավորման գործը լավ կազմակերպված պետք է լինի:

Արմատապատուղներ պահելու նորմալ Չերմությունը պետք է լինի 0 — +2 աստիճանը:

Աշնան սկզբին անխուսափելիորեն ստիպված ենք լինում բանջարեղենները պահել նորմալ Չերմությունից 2-ից 5 աստիճան ավելի բարձր Չերմության տակ (6 — 8 աստիճան Ցելսյուսով) և 95 տոկոսից բարձր խոնավության մեջ: Վորջան շուտ սահմանվի նորմալ ուժիմը, այնքան լավ կընթանա հետագա պահպանումը:

Արտադրության պայմաններում խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում արմատապատուղները կարելի չէ պահել ինչպես հատուկ բանջարապահեստներում կամ հարմարեցրած նկուղներում, այնպես և խրամատներում:

Խորհրդային Միության շրջանների մեծ մասի համար քանջարապահեստների ամենաընդունված ձևը նկուղներն են:

Միայն հողի խոնավությունը մի քանի շրջաններում ստիպում է անցնել հողից բարձր՝ կիսաբարձր պահեստների, ինչպես առաջին, այնպես ել յերկրորդ դեպքում: պահեստի պատերի բարձրությունը պիտի լինի 1,5 — 2 մետրի սահմաններում:

Բացջարեղենների նախապատրաստումն ամբարելու համար. — Պահեստները պետք է վերանորոգել և չորացնել ամառվանից, վորից հետո (ոգոստոսի վերջին) ախտահանել:

Ախտահանման ամենատարածված ձևը կրաջրով սպիտակացնելն է, վորի համար պետք է վերցնել անպայման նոր չհանգցրած կիր, մի դույլ ջրին (12 լիտր) 2,5 կգ: Ցեթե պահեստի հատակը հող է, կրափոշին ցրում են նաև հատակի վրա:

Ամեն մի պահեստի համար կիրը պետք է պատրաստվի զանվելիք բանջարեղենների քաջի 0,25 տոկոսի չափով: Ձմռանը նա ոգտագործվում է հատակի, դարակների և տարանների կըրկ-

նակի ախտահանման համար, իսկ հիվանդության դեպքում նաև բանջարի դիմերի ախտահանման համար:

Ամեն մի բանջարապահեստում պետք է լինեն Չերմաչափեր՝ առնվազն 2—3 հատ ամեն մեկում:

Պատարի դասավորումը՝ պահելու համար. — Թե սերմացու և թե մնդի համար գործավող դազարը յերկարատև պահելու դեպքում պետք է դարսել շտաբիներով (կույտերով) ու շարք: շարք, արանքներն ավաղ լցնել: Շտաբիների կամ կույտերի հիմքը վերցնում են 1 մետր ներքևում և 0,8 մետր վերևում այնպես, վոր կույտը լինի թեք կոնաձև: յերկարությունը լինում է 2—3 մետր և բարձրությունը՝ 0,75—1 մետր: Այսպես, կույտի տարողությունը կլինի մոտավորապես 6 — 8 հազար արմատապատուղ կամ 7,5—9,5 ցենտներ գազար, նայած սորտին և արմատների մեծությանը:

Կույտերն ըստ յերկարության դասավորվում են պահեստի կողքի պատերին ուղղահայաց: Կույտի նեղ մասը պահեստի պատից 15—20 սանտիմետր հեռու պետք է լինի: Կույտերի մեջ տարածություն է թողնվում 0,4—0,5 մետր:

Կույտերի ներքևի շարքը դարսվում է լավ չորացած հողե հատակի վրա (հատակի խոնավության դեպքում տակը զրվում են տախտակներ): Կույտերի յերկրորդ հարկը դասավորում են այն դարակների վրա, վորոնք հողից բարձր են 1,25—1,5 մետր: դարակները պետք է լինեն շարժական, վոր հնարավոր լինի յերկրորդ հարկը դարսել այն ժամանակ, յերբ ներքևի շարքն արդեն դարսված կլինի: Թե հատակին և թե դարակների վրա դասավորելու դեպքում կույտերի տակը պետք է լցնել 5—6 սմ հաստությամբ ավաղի շերտ: Արմատապատուղների ամեն մի շարքից հետո լցվում է մի շերտ ավաղ՝ 1,5—2 սմ հաստությամբ, վորպես զի արմատներն իրար չկպչեն: Կողքերի արտաքին շարքերում արմատների գլխները դասավորվում են զեպի դուրս: Շերտերը ծածկելու համար ամեն տարի պետք է վերցնել թարմ, գործածության մեջ չեղած ավաղ: Ավաղը հատուկ չորացնելու կարիք չկա, սակայն անձրևի տակ ընկած չպետք է լինի: Ամեն մի չկա, սակայն անձրևի տակ ընկած չպետք է լինի: Ամեն մի կույտի համար պահանջվում է դարսված արմատապատուղները ծավալի $\frac{1}{3}$ — $\frac{1}{2}$ -ի չափ ավաղ, կամ պահվելիք արմատապատուղների քաջին հավասար չափ: Յերկարատև պահելու համար թույլատրվում է գազարը դարսել առանց ավաղի այն դեպքում, յերբ արմատները դասավորվում են նեղ կույտերով (յերկար արմատ

լայնութեան կույտեր, վորտեղ արմատները դարսվում են դեպի դուրս ուղղված գլուխներով) կամ փոքր բուրգերով՝ 0,75—1 մետր հիմքի լայնութեամբ և 0,5—0,75 մետր բարձրութեամբ:

Աշնան կամ ձմռան առաջին ամիսներին գործածվի լիք դադարը կարելի չե լինել առանց ավազաչերտի: Պահեստի բաժանմունքների մեծութունը հետևյալն է. լայնութունը՝ 1—1,25 մետր, յերկարութունը՝ 2—3 մետր և լցնելու բարձրութունը՝ 0,75 մետր. այդպիսի բաժանմունքի տարողութունն է 1 տոնն: Բաժանմունքներն իրարից պիտի անջատված լինեն կրկնակի պատերով 2—3 սանտիմ. արանքներ ունեցող տախտակյա միջապատով:

ԽՆԱՄՔԸ ԳԱՀԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Բանջարեղեններն ամբարելուց հետո, պահեստի բոլոր միջանցքները, աստիճանները, հատակը և այլն անհրաժեշտ է մաքրել բոլոր թափուկներից, աղբից և բանջարեղենների մնացորդներից, վորոնք առաջանում են բանջարապահեստները լցնելու ժամանակ: Լավ մաքրելուց հետո միջանցքների հատակին և սանդուխտներին պետք է շագ տալ հանգցրած կրափոշի:

Ամբարման սկզբնական ժամանակաշրջանում բանջարապահեստների ջերմութունը հասնում է +5—8 աստիճանի, այսինքն նորմայից անհամեմատ ավելի բարձր, հետևաբար ամբարելուց հետո հիմնական աշխատանքը կայանում է ջերմաստիճանի կտրուկ նվազեցումով մեջ, այն է՝ իջեցնել մինչև պահանջվելիք նորման +20 Ցելսի:

Ջերմութունը չափվում և գրանցվում է հատուկ գրքերում՝ առանձին որ առավոտյան ժամը 8 ից 9-ը:

Աշնան ամիսներին ջերմութեան իջեցումն ստացվում է ուժեղ ոգափոխութեան (վենտիլացիա)՝ ողի հոսանքի միջոցով, փորի համար միաժամանակ բաց են անում պահեստի բոլոր անցքերը, ողհան խողովակները և դռները:


Պահեստում նորմալ ջերմութուն ստանալուց և գրտում ողջ սառելուց հետո (5 աստիճան ց) անցքերը, դռները և խողովակները (պատերի և անցքերի մեջ) ծածկում են և լավ տաքացնում: Բաց են մնում միայն վերին ողհան խողովակները:

Բացի ջերմաստիճանի գիտողութուններից, բանջարապահեստներում պարբերաբար պետք է ստուգել արմատապտուղների դրությունը կույտերի մեջ և դարակները վրա:

ԽՆԱՄՔԸ ԽՐԱՄԱՏՆԵՐՈՒՄ

Արմատապտուղները հատուկ բանջարապահեստներում պահելու հետ միասին, կարելի չե ոգտագործել նաև առուներում պահելու պարզ ձևը: Հարավային շրջաններում, արմատապտուղների յերկարատե պահելու ժամանակ, առողջ արմատապտուղներ ստանալու տեսակետից, ամենակեղևավորը խրամատներում պահելու ձևն է:

Հողի մեջ մինչև 80 սանտիմետր խորութեամբ պահելուց ստացվում է միապազաղ և հավասար ջերմաստիճան, վորն ապահովում է արմատապտուղների պահպանումը չնչին կորուստներով (մինչև 2%): Արմատների համար անհրաժեշտ է ընտրել բարձր դիրք ունեցող տեղեր՝ լանջերում կամ ցածր ստորերկրյա



Նկ 6. Արմատների շարքերով տեղավորումը խրամատում

ջրեր ունեցող հարթավայրում, վորոնք ունեն բնական թեթևութուն՝ մակերեսային ջրերի հոսելու համար:

Արմատապտուղների պահելու համար հանձնարարվում է խրամատների հետևյալ չափը. լայնութունը՝ 1 մետր, խորութունը՝ 50—80 սմ և յերկարութունը՝ 4—10 մետր:

Փորելու ժամանակ փոսի յերկար կողմերը դասավորվում են տվյալ տեղում իշխող ցուրտ քամիների ուղղութեամբ այն հաշվով, վոր ավելի նեղ կողմերը հեշտ լինի պաշտպանել ցրտահարութունից:

Արմատների մեջ գազարը լցնում են կամ իրար վրա, առանց ավազաչերտի, կամ դասավորում են շարքերով և ամեն մի շերտին լցնում ավազ կամ հող: Հարավային շրջաններում ավազաչերտով կամ հողով ծածկելն առանձնապես նշանակութուն

ունի բոլոր կուտուրաների համար և պետք է անպայման կիրառվի, մանավանդ զոր նրա կիրառումը վոչ մի դժվարութեան հետ չի կապված: Միջին և հյուսիսային գոտիները շրջաններում շերտերով լցնելը խոշոր նշանակութունն չունի և պետք է գործադրել թեթև սեահողերում, այսինքն այնտեղ, ուր չի պահանջվում հողի տեղափոխման հատուկ աշխատանք:

Խրամատները բանջարեղեններով պետք է լցնել փոսի բերանից 15 սանտիմետր պակաս խորութեամբ: Խրամատներում լցված բանջարեղենների մակերեսը պետք է լինի հարթ, առանց խորղուբորդի: Ամբարելուց անմիջապես հետո փոսը թեթև կերպով ծածկում են հողով, ըստ վորում բանջարեղեններով չլցրած աղատ տարածութունը լցնում են հողով:

Հողի մեջ ամբարած արմատապտուղները պետք է գտնվեն անընդհատ կոնտրոլի տակ: Կոնտրոլն իրագործվում է հատուկ ջերմաչափի միջոցով, վորը բաղկացած է 1,5 մետր յերկարութեամբ փայտե տուփից, վորի մեջ իջեցվում է ձողի վրա հազցրած ջերմաչափը: Տուփի ծայրին հազցնում են պղնձի գլան. ջերմաչափի գնդիկը տեղափոխված է պղնձե բաժակի մեջ և ծածկված պղնձի թեփով: Ջերմաչափը դրվում է խրամատի մեջտեղը գազարը լցնելու ժամանակ, թեք վիճակում (40—45 աստիճանի տակ), այն հաշվով, վոր ջերմութունը չափելիս հնարավոր լինի գիտողութունը կատարել առանց ծածկի վրա բարձրանալու և որորելու: Այդ նպատակի համար գոյութունն ունեն բուրգային ջերմաչափեր:

Խրամատների ձմրան լրիվ ծածկը տրվում է 2—3 նվազում: Սկզբում, ինչպես արդեն ասված է, տրվում է 5 սմ հաստութեամբ ծածկ, մինչև հողի մակերեսին հավասարվելը և մի 10—20 սմ էլ նրանից բարձր, ըստ վորում ծածկի յերկրը դուրս պետք է գան խրամատի սահմաններից 20—30 սմ հեռու:

Ցրտերն սկսվելու և ջերմաստիճանն իջնելու հետ միաժամանակ տրվում է ծածկի յերկրորդ շերտը, վորը կարող է կազմված լինել 35—50 սմ հաստութուն ունեցող փուխր ձգտաչերտից: վերջինիս վրա լցնում են 10 սմ հող, նույնպես դուրս գալով փոսի բերանից 20 սմ հեռու: այնուհետև կարելի չէ ծածկի յերկրորդ շերտը տալ միևնույն հողաչերտից, վերջնելով ծածկի մեջտեղում հաստութունը 30 սմ, իսկ կողքերում՝ 50 սմ:

Յեթե խրամատներում ջերմաստիճանը հասնում է նորմալին՝ մոտ 3—4 կայուն աստիճանի, ծածկի վրա լրացուցիչ լրցում են 25—30 սմ հող կամ 15—20 սմ գոմաղբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ել

1. Գազար	6
Կուտուրայի նշանակութունը	6
2. Գազարի սորտերը	7
3. Գազարի պահանջը կլիմայի, հողի նկատմամբ և պարարտացումը	10
4. Գազարի տեղը ցանքաշրջանառութեան մեջ և նախորդները	12
5. Պարարտացում	13
6. Հողի մշակումը	16
7. Ցանք	18
8. Ցանքի ժամկետները	19
9. Ցանքի ձևերը	20
10. Շարքացանի կանոնավորումը ցանքի նորմայի համաձայն	21
11. Չմուսնիք	23
12. Գազարի խնամքը	25
13. Քողհան և նոսրացում	25
14. Չմուսնիքի խնամքը	27
15. Բերրահավաքը	28
16. Սեղանի գազարի սերմարուծութունը	30
17. Ինչ պետք է իմանալ գազարի սերմարուծութեան ժամանակ	33
18. Գազարի հիվանդութունները	37
19. » արմատների թաղիքանման բորբոս	38
10. » վնասատուներ	38
21. » սերմացուների վնասատուները	39
22. » պահելը	41
23. Խնամքը՝ պահելու ժամանակ	44
24. Խնամքը խրամատներում	45

4098



Գրա. խմբ.՝ Հ. Մարջանյան
Թարգմ. և մասն. խմբագիր՝ Ս. Ռաչատրյան
Տեխ. խմբ.՝ Հ. Մուրադյան
Լեզվ. խմբ.՝ Աբր. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Գր. Կահարյան

Վրավիտի լիազոր Ս—441, հրատ. № 305, պատվ. № 109, տիրաժ 2590
Հանձնված է արտադրության 1936 թվի փետրվարի 10-ին
Ստորագրված է տպագրելու 1936 թվի մարտի 10-ին
3 տպագրական թերթ՝ 1 տպ. թերթում 38400 տպ. նշ.
Գյուղերասի տպարան, Յերևան, Նալբանդյան № 11



203

20806

ԳԻՆԸ 55 ԿՈԳ.



ԶԵԼԻՍԿՈՒՄԵՆԱ ԿՈՒՅՈՎՈՒՄԻՆԱ և ՐԱԲՈՇԵԳ ՏՈՎՈՅՈՅԻ

ՆԱՏՕԼՅՆԻՅ ՄՈՐԿՈՎՅ

ՅԵԼՅՈՅՐԳԻՅ ՎՐԻՎԱՆԻ 1936